Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1512
ա

# ՀՐԱՀԱՆԳ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

2041
513



Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՏՊ.

1867

12296

# ՀՐԱՀԱՆԳ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ. ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թարգմ. Յարութիւն Վ. Ալամդարեանց։

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

12296
1517

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ.

1867—ՌՅԺԶ

Պատրաստք լիջիք տալ պատասխանի ամի՝ որ խնդրիցէ զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ։ Այլ հեզութեամբ և երկիւղիւ... զի որով չարախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին որք բամբասեն զձեր բարւոք գնացս 'ի Քրիստոս։

Ա. Պետր. Գ. 15. և 16.



# ՅՈՐԴՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՌ ՀԱՅԿԱԶԻՆ ԲԱՆԱՍԷՐ ՀԱՄԲԱԿՍ.

Երկու գլխաւոր պարտաւորութիւնք են մարդոյ. Աստուածսիրութիւն և ընկերսիրութիւն. վասնորոյ Քրիստոս վարդապետն ճշմարտութեան յայս երկուս պատուիրանս ամփոփեաց զամենայն օրէնս. և Աստուածագիծն տամնաբանեայ պատգամք յերկուս տախտակս դրոշմեալ աւանդեցան իսրայէլեան տոհմի. սոքա արմատք՝ յորոց շառաւիղին այլ ամենայն փրկաւէտ օրէնք. և 'ի զանց առնել մարդոյ զմիոյ 'ի սոցանէ, զրկի 'ի մարդկութենէ և թերի յերկաքանչիւրսն գտանի։ Եւ կարի յիրաւունս. զի որ ճշմարիտ Աստուածասէրն է և Աստուածապաշտ, նոյն և ընկերասէր է կատարեալ. և որ բարեհամբոյրն է առ ընկերս նոյն և Աստուածասէր է անկեղծաւոր։ Ընկերսիրութիւնն անհակառակելի ապացոյց է Աստուածսիրութեան. ուստի Աստուածախօս Աւետարանիչն անհաւատ անուանակոչէ՝ զորս ատելութեամբ առ ընկերս բերին իսկ, կենդանապարգև Բանն Աստուծոյ փրկութիւնն մեր յընկերսիրութիւն խրախուսէ՝ զորս յԱստուածանմանութիւն վերասլանալ կամին։ Այսպ ուրեմն որ միանգամ կամիցի մարդ անուանիլ տիրապէս, պարտի անկեղծաւոր ընկերսիրութեամբ զճշմարիտ Աստուածսիրութիւն իւր յանդիմանել աշխարհի, տուեալ զԱստուծոյն՝ Աստուծոյ, և զընկերին՝ ընկերի։

Այլ որպէս որ շրջին 'ի գիշերի՝ ճրագի կարօտին առ 'ի չխոտորելոյ յուղիղ ճանապարհէ և 'ի խորխորատ գլորելոյ, նոյնպէս և մեք՝ որ դեգերիմք 'ի գիշերի տգիտութեան մեղաց, կարօտիմք ճրագի Աստուածային յայտնութեանց. զի ճրագ են բանք Տեառն ոտից մերոց և լոյս

տան շաւղաց մերոց ըստ Աստուածախօս Հագներգողին որ անդադար աղաղակէր, Դու լուսաւոր առնես զճրագ իմ Տէր Աստուած իմ լոյս արա ինձ 'ի խաւարի: Այլն իւր հարկ 'ի վերոյ կայ մեր 'ի մտանելն ընդ նախադրունս ուսման իմաստից, վերահայցել 'ի պարգեւատուէ ամենայն բարեաց յԱստուծոյ զհրաշունչ բանիցն զլուսաճաճանչ ճրագ առ ի խոտոր ժամանել յԱստուածգիտութիւն, յԱստուածսիրութիւն, և յԱստուածպաշտութիւն. Զի ճանաչելն զԱստուած բովանդակ արդարութիւն է և գիտելն զզօրութիւն Նորա' արմատ անմահութեան: Իսկ ընկերսիրութիւնն այնպէս զհետ երթայ Աստուածսիրութեան' որպէս ստուեր զհետ մարմնոյ:

Բայց յառաջքան զմուտն 'ի խորս աստուածային յայտնութեանց' պէտք են մեզ նախապատրաստել առ այն կազդուրել սկզբամբ իմաստութեան երկիւղիւ ասեմ Տեառն: Զայս նախապատրաստութիւն աշխատասիրեցին մեզ գումարք աստուածարեալ Վարդապետաց եկեղեցւոյ. ամփոփեալ 'ի հոգեշունչ գրուածս իւրեանց զմեկնութիւնս դժուարիմաց տեղեաց առ անաշխատ մատակարարելոյ մեզ զհոգեմնունդ արդասիս նոցա. և հետ զհետէ համառօտեալ զայն և պարզեալ, եդին 'ի համար դպրոցական մատենից իւր նախակրթութիւն իմն և բանալի սուրբ գրոց' անուանեալ զայս Հրահանգ Քրիստոնէական Վարդապետութեան. որով առ փոքր մի վարժեալ և առ սակաւ սակաւ յառաջ խաղացեալ' ժամանեմք 'ի գիտութիւն Աստուծոյ և պարտաւորութեանց մերոց:

'Ի բազմադիմի շահեկանութիւն սոյն օրինակ գրոց ակնարկեալ' և ըստ Տեառն յաջողելոյ հանդիպեալ ընտիր. համառօտ և պարզախօս օրինակի իմիք 'ի Ռուս լեզու. ապաւինելով յօժանդակութիւն շնորհաց Հոգւոյն Աստուծոյ, անվեհեր ձեռն արկի 'ի թարգմանութիւն նորին դիւրիմաց 'ի Հայումս առնելով. որպէս զի յընթեռնուլ ձեր զայս և 'ի լսել միանգամ և եթ 'ի Վարժապետացդ զմեկնութիւնն' իսկ և իսկ զիմաստ բանին յամբիծ տախտակ յիշողութեան ձերում տպաւորեսջիք: Եւ արդ' համազգի աշակերտակիցք Ճշմարտութեան. բարեմտութեամբ ընկալեալ զայս նուէր երկասիրութեան իմոյ, ընթերցարուք, լուարուք, հաւատացէք, կատարեցէք, իմաստնացարուք, փրկեցարուք, և փառս տուք Այնմ' որով շարժիմք և կեամք և եմք:

# ՀՐԱՀԱՆԳ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

### Ներածութիւն

Հ. Զի՞նչ ուսուցանէ վարդապետութիւնն քրիստոնէական։

Պ. Ճանաչել զԱստուած և վարել ըստ նորա կամաց կամ օրինաց։

Հ. Ի՞ւ իւիք հնար իցէ մեզ առնել զայդ։

Պ. Ի ձեռն մտաց մերոց և Աստուածային յայտնութեան։

Հ. Զի՞նչ է միտքն։

Պ. Կարողութիւն հոգւոյ որով ճանաչեմք զբնութիւն, զկարգ և զպատճառ իրաց։

Հ. Զի՞նչ իմանամք անուամբս Աստուածային յայտնութիւն։

Պ. զԱստուածաշունչ գիրս։

Հ. Զի՞նչ է պիտոյ առ Աստուածգիտութիւն ՚ի ձեռն մտաց։

Պ. Ողջամիտ քննութիւն արարածոց երևելի աշխարհիս։

Հ. Զի՞նչ պահանջի առ Աստուածգիտութիւն ՚ի ձեռն յայտնութեան։

Պ. Հաւատք՝ առ սրտի մտօք ընդունելու-

ամենայն ճշմարտութեանց պարունակելոց 'ի սուրբ Գիրս։

Հ. Ո՞ր յերկուց այտի է կատարելագոյն։

Պ. Ծանօթութիւն 'ի ձեռն մտաց չէ այնքան կատարեալ. զի ցայն վայր ձգի՝ որքան հնար է մարդոյ անձամբ անձին գիտել ինչ զԱստուծոյ. իսկ յայտնականն՝ կատարելագոյն ևս է. ըստ որում ունի յինքեան զոր ինչ միանգամ յայտնեալ է Աստուած զինքենէ մարդոյ. և կամ զոր ինչ միանգամ հարկ է մեզ զնմանէ գիտել։

Հ. Ըստ այսմ զիա՞րդ բաժանի վարդապետութիւնն քրիստոնէական։

Պ. Յերկուս մասունս։

Հ. Զի՞նչ պարունակէ յինքեան մասն առաջին։

Պ. Զծանօթութիւնս առեալ 'ի մտաց բնազննութեամբ. և կոչի Աստուածգիտութիւն բնական։

Հ. Զի՞նչ պարունակէ յինքեան մասն երկրորդ։

Պ. Զծանօթութիւնս առեալս 'ի սուրբ Գրոց և կոչի Աստուածգիտութիւն յայտնական։



# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յաղագս բնական Աստուածգիտութեան։

## ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս գոյութեան Աստուծոյ։

Հ. Զի՞նչ իմանամք անուամբս Աստուած։

Պ. Աստուած կոչեմք զգոյութիւն՝ որ զմեզ և զաշխարհս ամենայն ստեղծեալ, խնամարկէ զամենայն։

Հ. Զի՞նչ զառաջինն առաջնորդէ մեզ 'ի գիտութիւն գոյութեանն Աստուծոյ։

Պ. Ծանօթութիւն անձանց. քանզի 'ի քննել զծագումն ազգի մարդկան, ոչ գտանեմք զպատճառ գոյութեան նորա 'ի մեզ՝ զի անհնարին է մարդոյ ստեղծանել զինքն. և ոչ յայլ ամենայն գոյացութիւնս երևելի աշխարհիս, զի անկատար ևս գոլով նոցա քան զմեզ ոչ կարեն ստեղծանել զմեզ. ուստի և եզրակացուցանեմք լինել ամենակատար գոյութեան իմիք, յորմէ ստեղծաք. և այս գոյացութիւն՝ է Աստուած։

Հ. Ի՞ւ դարձեալ կարեմք իմանալ զգոյութիւն Աստուծոյ.

Պ. Քննութեամբ աշխարհիս, քանզի տեսեալ

զերկինս և զլուսաւորս նոցա ՚ի գեղեցիկ կարգի, իսկ զերկիրս ընդ բուսոց իւրոց և կենդանեաց, չէ՛ մարթ ոչ հարցանել. Ո՞ զայս ամենայն գոյացոյց և սահմանեաց Մարդ՝ ոչ զօրէ առնել զայդ. անձամբ անձին գոյանալ ոչ կարեն. վասն որոյ և զհետ բերեմք լինել ամենազօր գոյութեան իրիք, որ կարգեալ զայս ամենայն կառավարէ զամենայն. և այս ամենազօր գոյութիւն է՛ Աստուած։

Հ. Զի՞նչ ևս նպաստէ ապացուցի գոյութեանն Աստուծոյ։

Պ. Համաձայն խոստովանութիւն Աստուծոյ ամենայն ազգաց, քանզի թէպէտ քրէիքուր և տգիտաբարոյ ազգք ազգք աշխարհի ոչ կարացին ունել զխկաքանչ ծանօթութիւն ինչ զԱստուծոյ. սակայն ընդաբոյս խելամտութիւն Աստուածութեանն այնպէ՛ս էր տպաւորեալ ՚ի սիրտս նոցա միշտ, մինչև առաւել ցանկալ նոցա Աստուածացուցանել զերկնաւոր կամ զերկրաւոր արարածս, քան զԱստուծոյն ուրանալ զգոյութիւն։

Հ. Ի՞ւ իւիք դարձեալ հաստատի գոյութիւնն Աստուծոյ

Պ. Ներքին ներգործութեամբ խղճի մտաց. որ ՚ի գործել մեր զբարի ինչ՝ մխիթարէ



զմեզ. իսկ ՚ի գործել զչարիս յանդիմանէ. և որովհետև ոչ զմխիթարական և ոչ զյանդիմանական զօրութիւն նորա կարէ ոք յարարածոց առաւելուլ ՚ի մեզ կամ նուազել, ուրեմն է ծայրագոյն գոյութիւն ինչ պարգևատու այսր անսուտ իմացութեան ՚ի զանազանութիւն բարւոյ և չարի. ապա ուրեմն գոյ Աստուած։

Հ. Զի՞նչ ևս հաստատէ մեզ զգոյութիւնն Աստուծոյ։

Պ. Բնածին ցանկութիւն մեր ծայրագոյն բարւոյ. վասն զի իւրաքանչիւր մարդ ՚ի խնդիր երջանկութեան դեգերի աշխարհի աստ. այլ ամենայն արարածք ունին զինչ և իցէ ՚ի վիճակի իւրեանց ՚ի բաւականութիւն իւրեանց. իսկ զցանկութիւն մարդոյ, ոչ ինչ յերկրաւորս բարեաց կարէ բաւականացուցանել. և արդ՝ եթէ մարդս գերագոյն քան զնոսա գոլով՝ չէ պարտ թշուառագոյն քան զնոսա լինել. ուրեմն հա՛րկ է գոլ ևս կատարելագոյն քան զամենայն արարածս կենցաղոյս գոյութեան իրիք, որ կարիցէ յաւուր միում երանելի առնել զմարդն. ապա ուրեմն գոյ Աստուած։

# ԳԼՈՒԽ Բ.

## Յաղագս յատկութեանց Աստուծոյ.

Հ. Զի՞նչ առաջնորդէ մեզ ծանօթութիւն գոյութեան Աստուծոյ.

Պ. Առ ծանօթութիւն յատկութեանց նորա.

Հ. Զի՞նչ իմանամք անուամբս յատկութիւն Աստուծոյ:

Պ. Յատկութիւնք Աստուծոյ ասելով իմանամք զայնպիսի կատարելութիւնս, որք գոյացապէս պատշաճին Աստուծոյ միայն. և զոր անհնարին է ընծայել արարածոյ իւիք.

Հ. Զո՞րպիսի յատկութիւնս Աստուծոյ բացայայտէ մեզ ճշմարտութիւն գոյութեանն Աստուծոյ.

Պ. Եթէ գոյ Աստուած աներկբայ, հարկ է գոլ նմա անեղ. քանզի ամենայն եղական՝ արարած անուանի. իսկ եթէ անեղ է նա, հարկ է ամենայն արարածոց առ ՚ի նմանէ ունել զսկիզբն. զի անհնար է արարածոց յարարածոյ ստեղծանիլ. եթէ նա ետ ամենայն արարածոց զգոյութիւն և զկատարելութիւնս, զորս տեսանեմք ՚ի նոսա, հարկ է ունել զամենայն կատարելութիւնս ՚ի ծայրագոյն աստիճանի, քանզի զոր ինչ չունի ոք՝ ոչ կարէ



տալ այլում. իսկ եթէ ունի նա յինքեան զամենայն կարելի կատարելութիւնս, ապա ուրեմն Աստուած է գոյացութիւն ծայրագոյն:

Հ. Զի՞նչ ևս իմանամք զԱստուծոյ զմտաւ ածելով զգոյութիւն նորա:

Պ. Եթէ գոյ Աստուած. հարկ է գոյութեան նորա մնալ ՚ի կամս նորա միայն՝ քանզի անըստեղծ է յումեքէ. իսկ եթէ պատճառ գոյութեան նորա է ՚ի նմա միայն. հարկ է նմա գոլ ՚ի յաւիտենից ըստ ինքեան. ապա ուրեմն ինքնագոյ է Աստուած և անկախ զումեքէ:

Հ. Դարձեալ զորպիսի յատկութիւնս յայտնէ մեզ գոյութիւն նորա.

Պ. Եթէ գոյ Աստուած, հարկ է նմա ունել զգոյութիւն անսահման. քանզի չի՛ք ինչ իշխող՝ գոյութեան նորա. իսկ եթէ ոչ կարէ ինչ սահման դնել գոյութեան նորա, ապա ուրեմն անհնարին է Աստուծոյ ոչ գոլ:

Հ. Ըստ այսմ զորպիսի ծանօթութիւն մարթ լինէ մեզ զգոյութենէ Աստուծոյ ունել,

Պ. Աստուած է գոյութիւն ծայրագոյն, անկախ, ինքնագոյ, և որում անհնար է ոչ գոլ:

Հ. Զի՞նչ զհետ գայ լինելութեան Աստուծոյ գոյացութիւն ծայրագոյն:

Պ. Զհետ գայ լինել մի. քանզի երևակայել

զերկու կամ զբազում ծայրագոյն եակս՝ ներհակ է ուղղամիտ քննութեան ։

Հ. Զի՞նչ իմանամք զԱստուծոյ գիտացեալ զանկախութիւն նորա զումեքէ։

Պ. Ըստ այսմ հարկ է նմա լինել անսկզբնաբար յաւիտենական և ինքնիշխան ։

Հ. Զինչ զհետ գայ ինքնագոյութեանն Աստուծոյ ։

Պ. Նախ զի Աստուած է ինքնեղ, ուրեմն զամենայն կատարելութիւնս և զզօրութիւնս պարունակէ յինքեան. և է ամենակարող. ամենիմաստ և գերակատար. իսկ եթէ գերակատար է՝ հարկէ լինել և ամեներանեալ. քանզի ոչ կարէ կարօտիլ իմիք. և եթէ առանց իրիք հարկի շնորհեաց արարածոց զգոյութիւն և կատարելութիւնս. ուրեմն է ամենաբարի ։

Հ. Զի՞նչ զհետ գայ անհնարին լինելոյն Աստուծոյ ոչ գոլ ։

Պ. Նախ զհետ գայ լինել Աստուծոյ մշտագոյ և անսկզբնաբար յաւիտենական. և գոլով այսպիսի, հարկ է գոլ անմարմին. ապա և հոգի ամենապարզ. և գոլով ամենապարզ և անպարագիր հոգի՝ հարկ է գոլ ամենուրեք. և եթէ ամենուրեք, ապա և ամենագէտ. իսկ եթէ ամենագէտ, ապա և արդարադատ ։



Հ. Նաև արդ զո՞րպիսի յատկութիւնս ունի Աստուած ։

Պ. Աստուած է մի, հոգևոր, անկախ, անսկիզբն, անվախճան, յաւիտենական, ազատ, ամենիմաստ, ամենակարող, ամենուրեք կամ ամենավայր, ամենագէտ, ամենաբարի, ամենասուրբ և արդարադատ ։

Հ. Զի՞նչ առաջի առնեմք բառիւս միութիւն Աստուծոյ.

Պ. Թէ չիք այլ գոյութիւն ինչ գերագոյն կամ հաւասար Աստուծոյ ՚ի կատարելութիւնս ։

Հ. Զի՞նչ է գոյութիւնն հոգևոր.

Պ. Հոգևոր գոյութիւնն չունի յինքեան զնիւթական մասունս ինչ և ոչ ՚ի ներքոյ անկանի մարմնաւոր զգայութեանց.

Հ. Զինչ իմանամք անուամբս անկախութիւն Աստուծոյ.

Պ. Թէ գոլով Աստուծոյ անեղ՝ ոչ ուրուք կարօտի պահպանութեան, այլ յինքենէ ունի զգոլն ։

Հ. Զի՞նչ նշանակեմք կոչելով զԱստուած անսկիզբն, անվախճան, և յաւիտենական.

Պ. Թէ Աստուած է այնպիսի յաւիտենական գոյութիւն՝ որոյ զսկիզբն գոյութեան իւրոյ և ոչ զվախճան ՚ի ժամանակի կարէ ունել ։

Հ. Զինչ նշանակէ գոյութիւն ամենազատ.

Պ. Զայնպիսի գոյութիւն՝ որ ոչ ՚ի ներ-

քուստ և ոչ արտաքուստ բռնադատի յումեքէ ։

Հ. Զի՞նչ իմանամք անուամբս իմաստութիւն Աստուծոյ ։

Պ. Թէ խորհուրդք Աստուծոյ զմէնջ՝ երբեմն անքննելիք են 'ի մէնջ. բայց ներգործութիւնք միշտ ակներև գերագոյնք են և բարիք ։

Հ. Զի՞նչ է ամենակարողութիւնն Աստուծոյ ։

Պ. Ամենաբաւական ինքնիշխան զօրութիւն Աստուծոյ 'ի ստեղծանել զամենայն ։

Հ. Զի՞նչ է ամենայն ուրեքութիւն Աստուծոյ ։

Պ. Առաջն կայութիւն նորա յամենայն ժամանակի ամենայն ուրեք ։

Հ. Զի՞նչ է ամենագիտութիւնն Աստուծոյ ։

Պ. Անպատում գիտութիւն Աստուծոյ ամենայն անցեալ, ներկայ և ապառնի գործոց յաշխարհի եւս և գաղտնեաց բանականացս ։

Հ. Զի՞նչ նշանակեմք զԱստուած՝ ամենաբարի կոչելով ։

Պ. Թէ գոլով Աստուծոյ անձամբ անձին ամենակատար և երանալից, զամենայն արարածոց զբարին կամի ։

Հ. Զի՞նչ առաջի առնեմք արդարադատ անուանելով զԱստուած ։

Պ. Թէ Աստուած սիրէ զբարութիւն և ըղ-



ճշմարտութիւն միայն, և զանիրաւութիւն ինչ ոչ կարէ ցուցանել և միշտ ըստ արժանեաց պատուհասէ և վարձատրէ ։

## ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս արարչագործութեան Աստուծոյ.

11296

Հ. Վասն է՞ր երգակացուցանեմք թէ աշխարհս արարած է Աստուծոյ ։

Պ. Վասն այնորիկ՝ զի Աստուած միայն է անսկզբնական, ապա ուրեմն հարկ է ամենայն էակաց առ 'ի նմանէ զսկիզբն իւրեանց ունել ։

Հ. Որպէս ստեղծ Աստուած զաշխարհս ։

Պ. Յանէից այլ ոչ 'ի յաւիտենից ։

Հ. Ընդէ՞ր զաշխարհս ասեմք ստեղծեալ 'ի ժամանակի և ոչ 'ի յաւիտենից ։

Պ. Վասնզի 'ի յաւիտենից գոլով աշխարհի ոչ եւս լինէր արարած. այլ անսկիզբն լինելով կարէր ունել զյատկութիւնս Աստուծոյ ։

Հ. Վասն է՞ր հաստատեմք թէ Աստուած ստեղծ զաշխարհս յոչ ընչէ ։

Պ. Վասն այնորիկ, զի ամենայն էակք՝ յորոց աշխարհս բաղկանայ՝ ոչ կարացեալ ինքնագործ էանալ, յԱստուծոյ ածան յոչ գոյից 'ի

դոյ. ապա ուրեմն յառաջ քան զարարչագործութիւնն Աստուծոյ ոչ գոյր ինչ բաց յԱստուծոյ արարչապետէ։

Հ. Ըստ կարօտութեան կամ առ անհրաժեշտ հարկի՞ ընտրեց Աստուած զայս աշխարհ։

Պ. Ո՛չ առ անհրաժեշտ հարկի. քանզի Աստուած է ազատ գոյացութիւն. և ոչ առ կարօտութեան, զի երանաւէտ գոլով նորա և ամենակատար, ոչ կարէ ունել զկարօտութիւն ինչ յարարածս։

Հ. Զի՞նչ էր ուրեմն վախճանականն պատճառ արարչութեան աշխարհիս։

Պ. Այն միայն անհուն բարութիւնն Աստուծոյ՝ որ հաճեցաւ ունել զարարածս հաղորդս պարգևաց բարութեան իւրոյ։

Հ. Արդ թէ ամենայն արարածք հաղորդին պարգևաց բարութեանն Աստուծոյ։

Պ. Ամենեքեան առ հասարակ, որպէս բանականք նոյնպէս անբանք և անզգայք։

Հ. Զի՞նչ է անբան և անզգայ արարածոցն հաղորդութիւն բարութեանն Աստուծոյ։

Պ. Ստացուած գոյութեան և կատարելութեան յԱստուծոյ ըստ իւրաքանչիւրոցն պատշաճի։



Հ. Ո՞ յերկրաւոր արարածոց արժանի գտաւ առանձին պարգևաց Աստուծոյ։

Պ. Մարդ՝ քանզի զարդարեալ է բանական և անմահ հոգւով։

Հ. Վասն է՞ր հաստատեմք թէ մարդ ունի զհոգի բանական

Պ. Վասն այնորիկ՝ զի ունի նա զկարողութիւն ոչ միայն ճանաչելոյ զիւրեաւ շրջասփիւռ իրս զմին 'ի միւսոյն զանազանելով, այլև քննելոյ զանձն իւր. մակաբերելոյ 'ի ներկայէ զապագայն և դատելոյ զհետևանաց և զպատճառաց իրաց, առ որ հարկիւ բանականութիւն պահանջի։

Հ. Ի՞ւ մարթէ ապացուցանել զանմահութիւն մարդկային հոգւոյ։

Պ. Այնուիկ՝ զի հոգի մարդոյ է գոյացութիւն իմացական՝ որ չունի ինչ հասարակ ընդ մարմնաւորաց և նիւթականաց. քանզի ոչ ներքոյ անկանի բաժանման և չափման. իսկ եթէ չունի զծանրութիւն և զչափ, ուրեմն չէ բաղկացեալ 'ի նիւթոյ իմեքէ և չունելով զմասունս ինչ՝ պարտ է լինել անեղծ և անմահ։

Հ. Ըստ ի՞նչ վախճան ստեղծան անզգայ և անբան էակք։

Պ. Գեղեցիկ վախճան գոյութեան նոցա յայն

է՝ զի փոխադարձ ծառայութեամբ միմեանց՝ պահպանեսցեն զկարգաւորութիւն և զանքակտելի կապակցութիւն աշխարհիս։

Հ. Զի՞նչ է գերագոյն վախճան գոյութեան մարդոյ։

Պ. Վայելչութիւն անմահութեան և անվախճան երանութեան զկնի ըստ Աստուծոյ հաճոյից յատուկ կենցաղավարելոյ։

## ԳԼՈՒԽ Գ.

### Յաղագս Նախախնամութեան Աստուծոյ.

Հ. Արարեա՞լ Աստուծոյ զաշխարհս ի կամս դիպուածոց եթող գնալ.

Պ. Ո՛չ. այլ անդադար նախախնամէ զայն։

Հ. Հնա՞ր իցէ իւր իմիք եղանել յաշխարհի ըստ պատահման կամ ըստ հարկի.

Պ. Ո՛չ երբէք. քանզի թէպէտ և հանդիպին անցք ինչ, զոր պատահական կոչեմք՝ չկարացեալ ըստ բնականին խելամուտ լինել պատճառացն. այլ ամենատես գիտութիւն Աստուծոյ տեսանէ և զայնոսիկ ի գաղափարի ամենիմաստ տնօրէնութեանն իւրոյ։

Հ. Զի՞նչ է նախախնամութիւնն Աստուծոյ։



Պ. Պահպանութիւն գոյութեան և զօրութեան արարածոց և իմաստնաբար ուղղութիւն նոցա առ վախճան բարեգոյն.

Հ. Վասն է՞ր խոստովանիմք պահպանել Աստուծոյ զգոյութիւն և զզօրութիւն անշունչ և անբան էակաց.

Պ. Վասն այնորիկ՝ զի գոյութիւն ամ էակաց կախի զկամաց արարչին նոցա, քանզի որպէս անհնարին էր նոցա ինքնագոյ լինել առանց Աստուծոյ նոյնպէս անհնարին է առանց Աստուածային նախախնամութեան անկորուստ պահպանել զգոյութիւն իւրեանց։

Հ. Ուստի՞ տեսանի պահպանութիւնն Աստուծոյ անբան և անկենդան էակաց.

Պ. Ընտի՝ զի ամ էակք ի սկզբանէ աշխարհի մինչև ցայժմ, փոխադարձ արբանեկութ միմեանց պահպանեն զանքակտելի կապակցութ աշխարհի. և որովհետև վասն այսորիկ ընդհանրական կարգաւորութեան ոչ ինքեանք կարեն ինչ հոգալ և ոչ մարդս, ապա ուրեմն աստուածային կառավարին նախախնամութ։

Հ. Զո՞ր յարարածոց նախախնամէ Աստուած առանձին իմն հոգողութեամբ.

Պ. Զմարդն. քանզի զայլ ամ իրս ի ծառայութիւն նմա կարգեաց։

Հ. Յի՞նչ միտս իմացեալ լինի ծառայութիւն ամենայն արարածոց մարդոյ։

Պ. Ի վերաբերութեան առ համօրէն ազգ մարդկան, զի արեգակն, լուսին և աստեղք լուսաւորեն զմեզ. օդով կատարեմք զտուր և առ շնչոյ. հող և ծով, բոյսք և կենդանիք մատակարարեն մեզ կերակուր, զհանդերձ և զբնակարանս։

Հ. Մ՟րդե՞օք ուղղէ Աստուած զմարդն առ վախճան գերագոյն։

Պ. Մ՟ներև, քանզի եթէ առ կատարեալ երջանկութիւն մարդոյ հարկաւ պահանջի անդորրութիւն խղճի մտաց. և այդ անդորրութի՟ ըստ առաքինութեան միայն է լծորդ. ուրեմն Աստուած ուղղելով զոմանս պատուհասիւք, զայլս վարձատրութեամբ, և այլ ամթիւ եղանակաւ համոզելով զմարդիկ յառաքինութի՟ միշտ առաջնորդէ նոցա առ վախճան գերագոյն առ երանութիւն յաւիտենական։



# ԳԼՈՒԽ Ե.

## Յաղագս Աստուածպաշտութեան։

Հ. Իւ՞ յաղագս այսր ամենայնի պարտաւորի մարդ աստուծոյ։

Պ. Պաշտամամբ։

Հ. Զի՞նչ է Աստուածպաշտութիւնն։

Պ. Ցուցակութի՟ հպատակութե՟ մերոյ Ա՟Յ։

Հ. Զիա՞րդ ցուցանի հպատակութիւն մեր Աստուծոյ։

Պ. Ներքուստ և արտաքուստ։

Հ. Զի՞նչ է Աստուածպաշտութիւնն ներքին։

Պ. Մեր անկեղծաւոր առ Աստուած և սրտի մտօք հնազանդութիւն կամաց նորա կամ օրինաց։

Հ. Զի՞նչ է Աստուածպաշտութիւնն արտաքին։

Պ. Երկրպագութի՟, ընթերցուածք աղօթից, յաճախել յեկեղեցի և յարգութիւն եկեղեցական արարողութեանց։

Հ. Բաւակա՞ն իցէ մին յայսցանէ առանց միւսոյ։

Պ. Ո՛չ ներքինն առանց արտաքնոյն և ո՛չ արտաքինն առանց ներքնոյն կարէ գոլ կատարե՟լ։

Հ. Վասն է՞ր Աստուածպաշտութիւնն արտաքին թէրի համարի առանց ներքնոյն։

Պ. Քանզի եթէ մեք առ ոչ ինչ համարիմք զլոկ ցոյց ջերմեռանդութեան, որոց մտերմութե՟

չեմք տիրապէս տեղեակք, ո՛րքան եւս առաւել արդեօք Աստուած տհաճ գտցի ընդ պաշտօն արտաքին առանց ներքնոյն ։

Հ. Ընդէ՞ր անկատար համարի Աստուածպաշտութիւնն ներքին առանց արտաքնոյն ։

Պ. Վասն այնորիկ՝ զի եթէ հոգի մեր այնպէս անձուկս է շաղկապեալ ընդ մարմնոյ մինչեւ ամ զգացմանց նորա հարկիւ արտայայտիլ ՚ի ձեւն արտաքին նշանաց ինչ, ապա եւ զգայութեան ներքին եւ ճշմարիտ Աստուածպաշտութեան հարկ է միաբանիլ ընդ արտաքնոյն ։

Հ. Ե՞րբ լինի Աստուածպաշտութիւնն կատարեալ ։

Պ. Յորժամ ջերմեռանդական ներգործութեամբ զգայութեանց սրտի եւ զգայութիւն հոգւոյ բարեպաշտ գործոց համաձայնին ։

Հ. Զի՞նչ պարտաւորէ զմարդն յԱստուածպաշտութիւն ։

Պ. Ընծայելի կատարելութիւնք Աստուծոյ. քանզի եթէ Աստուած է ամենաբարի, ուրեմն հարկ է մեզ անկեղծաւոր սիրով ՚ի նա յարիլ. եթէ է արդարադատ, պարտ է մեզ երկնչել յանհնազանդութենէ կամաց նորա եւ ՚ի ներքոյ անկանելոյ խրատուցի բարկութեան նորա. եթէ է անսկիզբն, անվախճան եւ ամենակարող



պարտիմք գերապատուել զնա իբրեւ զմեծարագոյն գոյութիւն ։

Հ. Վասն է՞ր դարձեալ պարտաւորիմք պաշտել զԱստուած ։

Պ. Վասն այնորիկ՝ զի նա է արարիչ մեր եւ նախախնամող. երբ զի շնորհեաց մեզ գոյութիւն. առեղծանել զմեզ բանական եւ անմահ՝ է այնպիսի պարգեւ բարութեանն Աստուծոյ՝ որ հարկաւ ստիպէ զմեզ ՚ի գոհութիւն զնմանէ. եւ տեսեալ զԱստուած յանդադար հոգածութեան զմեզ եւ ՚ի շնորհաբաշխութեան ամենայն հարկաւորաց եւ օգտակարաց առ դարման կենաց, պարտաւորիմք գերյարգել զնա իբրեւ զհայր ամենողորմ ։

Հ. Զի՞նչ դարձեալ յորդորէ զմեզ առ պաշտօն Աստուծոյ ։

Պ. Վարձն, զոր Աստուածապաշտք ընդունին յաստիս եւ կարեն ընդունիլ ՚ի հանդերձելումն ։

Հ. Վասն է՞ր մարթ իցէ մեզ ակն ունել վարձուց յաղագս Աստուածպաշտութեան ։

Պ. Քանզի որպէս արդարութիւնն Աստուծոյ պատուհասէ զանհնազանդս կամաց իւրոց, նոյնպէս վարձատրէ եւ զհնազանդս իւր ։

Հ. Զի՞նչ է՞ վարձ Աստուածպաշտութեան յաստի կենանս ։

Պ. Անդորրութիւն խղճի մտաց՝ որով զուար-

ճանայ մարդ ՚ի գործելն միայն զբարի ինչ առաջի Աստուծոյ.

Հ. Իսկ ՚ի հանդերձելումն.

Պ. Կատարեալ երջանկութիւն. քանզի յաստիս յորժամ անգամ անհլու գտեալ կամացն Աստուծոյ՝ զրկիմք յերանական վիճակէ յանդորրութենէ խղճի մտաց. իսկ յանտիս՝ ոչ յիմիքէ հրապուրեալ ՚ի չարիս և հանապազ պնդեալ երթեալ սուրբ կամացն Աստուծոյ, վայելեսցուք զուրախութիւն անսպառ.

Հ. Զինչ եր կարեմք ակնունել ՚ի հանդերձեալ կենաց։

Պ. Նախ վասն այնորիկ զի ունիմք զհոգի անմահ. երկրորդ՝ որովհետև բազմիցս տեսանեմք յաջողարնէ աստ վարել անօրինաց զկեանս ՚ի լիութեան և յերջանկութեան. իսկ առաքինեաց կեալ և մեռանիլ յաղքատութեան և ՚ի թշուառութեան. այլ արդարութիւն Աստուծոյ անտեղի է թողուլ զբարիս անվարձ և զչարս անպատուհաս. ապա ուրեմն հարկ է լինել այլ կենաց զկնի մահուան. ուր ամենայն ոք զարժանաւորն ընկալցի ըստ գործոց իւրոց զհատուցումն.



# ԴԱՍ ԺԶ.

## Յաղագս յայտնութեան Աստուծոյ։

Հ. Ուստի՞ կարեմք ընդունել զառաւել ծանօթութիւնս զԱստուծոյ.

Պ. Ի յայտնութենէ.

Հ. Զինչ է յայտնութիւնն։

Պ. Բան Աստուածային դրոշմեալ ՚ի գիրս՝ որ ուսուցանէ մարդկան ճանաչել և պաշտել զճշմարիտն Աստուած. և ցուցանէ զհարազատ միջոցս ՚ի ժառանգութիւն երանութեան.

Հ. Մի՞թէ կարօտէ՞ր ազգ մարդկան Աստուածային յայտնութեան.

Պ. Անշուշտ. քանզի թէպէտ լուսաւորութեամբ մտաց կարողք եղեն մարդիկ յարարածոց ճանաչել զԱրարիչն, զկատարելութիւնս նորա և զկամս. այլ ապականութիւն սրտի և չարաչար հակամիտութիւնք յետս քարշեալ զնա ՚ի կատարելոյ զկամս Աստուծոյ. միշտ վրիպեցուցանէին յայնմ երանական վախճանէ, վասն որոյ ստեղծեալն էր. ուստի և մարդասէրն Աստուած առաքեաց զգիրսն և զհարազատ հնար փրկութեան շնորհելով մեզ զյայտնութիւն.

Հ. Ո՞ր բովանդակի յայտնութիւնն Աստուծոյ։

Պ. Յաստուածաշնչի այս է 'ի Հին և 'ի Նոր կտակարանի։

Հ. Զի՞նչ կայ 'ի Հին կտակարանի։

Պ. Պատմութիւն սկզբնաւորութեան աշխարհի և եկեղեցւոյ Հրէից. մարգարէութիւնք 'ի վերայ Փրկչին և օրէնք՝ որք պատրաստեն զմարդ յընդունելութիւն Աւետարանական հաւատոյ։

Հ. Զի՞նչ պարունակի յինքեան Նոր կտակարան։

Պ. Բացայայտէ զլրութիւն մարգարէութեանց և քարոզէ զողորմութիւնն Աստուծոյ՝ զարդիւնս մահուան Յիսուսի Քրիստոսի։

Հ. Յումմէ՞ գրեցաւ Հին կտակարանն։

Պ. Ի Մարգարէից։

Հ. Ո՞յք էին Մարգարէք։

Պ. Արք՝ որոց շնորհեալ էր Աստուծոյ զպարգև նախատեսութեան ապագայից և սքանչելագործութեան։

Հ. Նոր կտակարան յումմէ՞ գրեցաւ։

Պ. Յառաքելոց։

Հ. Ո՞յք էին առաքեալք։

Պ. Աշակերտք Յիսուսի Քրիստոսի։

Հ. Զիա՞րդ կարասին գիրս գրեցին Մարգարէք և Առաքեալք։



Պ. Հոգւով սրբով։

Հ. Վասն է՞ր խոստովանիմք զՀին կտակարանն գրեալ հոգւովն Աստուծոյ։

Վասն այնորիկ՝ զի տեղեկութիւնք զԱստուծոյ դրոշմեալք 'ի նոսա գերազանցք են և կատարեալք. կանոնադրութիւնքն՝ սուրբք և ճշմարիտ. պատմութիւնք անցիցն սքանչելիք և անհաւատալիք. քանզի հաստատին յականատես վկայից ևս և 'ի թշնամեաց հաւատոյ. մանաւանդ զի ամենայն նախասացութիւնք որ 'ի նոսա ճշմարտեալ են լրութեամբ։

Հ. Ի՞ւ ցուցանի աստուածայայտնութիւնն Նորոյ կտակարանի։

Պ. Այնուիկ՝ զի վարդապետութիւնն, որ 'ի նմա բղխեալ է 'ի բերանոյ Աստուածամարդոյն Յիսուսի Քրիստոսի. զի աշակերտք նորա հեղինակք այսր գերազանց գրուածոյ՝ անգետք էին մարդկեղէն դպրութեանց. զի քարոզէին նոքա զհաւատս 'ի լեզուս զանազան ազգաց. և զի սակաւաւոր թիւ Առաքելոց առանց երկրաւոր նպաստից ինչ միայն զօրութեամբ բանից հերքեցին զկռապաշտութիւնն յաշխարհէ և ընդ այնր հաստատեցին զխորհուրդս Քրիստոսական հաւատոց։

Հ. Զի՞նչ յայսմ ամենայնէ պարտ իցէ եզրակացուցանել զԱստուածաշնչէն։

Պ. Թէ այն է ճշմարիտ բան Աստուծոյ և պարտի լինել անզուգական կանոն բարուց և հաւատոց մերոց։

Հ. Արդեօ՞ք դիւրընկալ է այն և բաւական Աստուածգիտութիւն։

Պ. Դիւրիմաց է ամենեցուն և բացայայտէ զհարկաւորսն հաւատոյ, յուղղութիւն վարուց և 'ի փրկութիւն. իսկ զԱստուծոյ, զկատարելութեանց նորա և զկամաց՝ պայծառաբանէ անհամեմատ առաւելութեամբ քան զմիտս մեր։



# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

Յաղագս յայտնական Աստուածգիտութեան։

## ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս գոյութեան և կատարելութեանց Աստուծոյ։

Հ. Աստուածաշունչ գիրք հաստատե՞ն զգոյութիւնն Աստուծոյ։

Պ. Այնպիսի յայտնաբարբառ բանիւք՝ մինչև անզգամ անուանել զորս երկբայեն յայնմիկ։

Հ. Յո՞րում տեղւոջ յիշատակի այդ։

Պ. Յօրհներգութիւնս Մարգարէին Դաւթի՝ Ասաց անզգամն 'ի սրտի իւրում թէ ո՛չ գոյ Աստուած։ (1)

Հ. Ի՞ւ հաստատի գոյութիւնն Աստուծոյ յԱստուածաշունչ տառսն։

Պ. Արարչագործութեամբ և կարգաւորութ երևելի աշխարհիս՝ զոր 'ի քննելն անհնարին է ումեք ուրանալ զգոյութիւնն Աստուծոյ. ըստ առաքելոյն Պօղոսի թէ՝ Աներևոյթքն

(1) Սաղմ. ժգ. 1։

Աստուծոյ արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է մշտնջենաւորութիւն և զօրութիւն և Աստուածութիւն նորա: (1)

Հ. Ի՞ւ դարձեալ հաստատեն սուրբ գիրք զգոյութիւնն Աստուծոյ:

Պ. Հրաշալիս պահպանութեամբ եկեղեցւոյ ՚ի սկզբանէ աշխարհիս՝ որպէս առ Նախահարց դարէն Մովսէս. Բաժին տեառն Յակոբ. բաւական եղև նմա յանապատի և խրատեաց և պահեաց զնա իբրև զբիբական: Տէր միայն ածէր զնոսա: (2)

Հ. Զի՞նչ յայտնութիւնն ստորագրէ զԱստուած:

Պ. Յայտնութիւնն առէ զԱստուծոյ լինել մի, հոգի ամենապարզ և ամենասուրբ, մշտնջենաւոր, ազատ, անկախ, ամենակարող, ամենագէտ, ամենուրեք, ամենաբարի, ամենարդար և մարդասէր:

Հ. Յորո՞վ տեղւոյ Աստուածաշնչին ցուցանի միութիւնն Աստուծոյ:

Պ. ՚Ի Թուղթս Պօղոսի առաքելոյ. Մի Ա̃ծ և Հայր ամենեցուն, որ ՚ի վերայ ամենայնի

(1). Հռոմ. ա. 20:
(2). բ. Օրինք. լբ. 9. 10. 12:



և ընդ ամենեսին և յամենեսին ՚ի մեզ: (1)

Հ. Յորո՞վ տեղւոյ տեսանի հոգի լինելն Աստուծոյ:

Պ. Յաւետարանին Յովհաննու. Հոգի է Ած̃: (2)

Հ. Եթէ հոգի է Աստուած, ապա վասն է՞ր ՚ի սուրբ գիրս ընծային նմա անդամք մարդոյ. զոր օրինակ. Աչք Տեառն ՚ի վերայ արդարոց և ականջք նորա ՚ի վերայ աղօթից նոցա: Երեսք Տեառն ՚ի վերայ չարագործաց: (3) Ձեռք քո արարին զիս. և այլն: (4)

Պ. Սուրբ գիրք ՚ի խօսելն զԱստուծոյ զմարդկեղէն լեզու ՚ի կիր առնուն: Աչօք՝ այլաբանեն զնախախնամել նորա զարարածս և զամենատեսութիւնն. ականջօք՝ զլսել նորա աղօթից մերոց. բերանով՝ զյայտնութիւն կամաց իւրոց մեզ. երեսօք՝ զբարկութ̃ նորա կամ զողորմութիւն. ձեռօք՝ զամենակարողութիւն նորա. ոտիւք՝ զարագահաս լինել նորա յօգնութիւն արդարոց և ՚ի պատիժ ամբարշտաց. քնով՝ զլքումն մեղաւորաց. և այլն:

Հ. Սուրբ գիրք վկայե՞ն յաւիտենականութեան Աստուծոյ.

Պ. Յայտնապէս աղաղակէ Մարգարէն Դաւիթ

(1). Եփես. դ. 6.
(2). Յովհ. դ. 24.
(3). Սաղմ. լդ. 16. 17:
(4). Սաղ. ճժը. 73 :

ու Աստուած. Յաւիտենից մինչև յաւի-
տեանս դու ես ։ (1)

Հ. Զիա՞րդ նկարագրի անսահման ազատութիւն նորա.

Պ. Այսպէս ստորագրէ զայն սաղմոսերգուն. Աստուած մեր յերկինս և յերկրի. զամենայն զոր ինչ կամեցաւ և արար ։ (2)

Հ. Հաստատի՞ ՚ի սուրբ գիրս անփոփոխութիւնն Աստուծոյ։

Պ. Զայսմանէ այսպէս ասէ ինքն Աստուած ՚ի ձեռն Եսայեայ Մարգարէի. Յառա՛ջ քան զիս ոչ եղև այլ Աստուած և յետ իմ ոչ եղիցի ։ (3)

Հ. Ո՞ւր խօսի յայտնութիւնն զամենակարողութենէն Աստուծոյ.

Պ. Յաւետարանին Մատթէոսի. Առ յԱյ ամենայն ինչ զօրաւոր է ։ (4)

Հ. Յորո՞ւմ տեղւոջ Աստուածաշնչին ցուցանի ամենագէտ լինելն Աստուծոյ։

Պ. ՚Ի բանս Յովհաննու Առաքելոյն. Աստուած զամենայն ինչ գիտէ ։ (5)

Հ. Իսկ ամենուրեքն գոլ նորա՞.

(1). Սաղմ. ՂԹ. 3.
(2). Անդ. ՃԺԳ. 11 :
(3). Եսայ. ԽԳ. 11.
(4). Մատ. ԺԹ. 26.
(5). Ա. Յովհ. Գ. 20.



Պ. ՚Ի սաղմոսերգութեանս Դաւթի. Յերե-
սաց քոց ես յո՞ փախեայց. թէ ելանեմ յեր-
կինս՝ դու անդ ես. եթէ իջանեմ ՚ի դժոխս՝
և անդ մօտ ես ։ (1)

Հ. Հաստատէ՞ յայտնութիւնն զանհուն բարութիւնն Աստուծոյ։

Պ. Զբարութենէն Աստուծոյ այսպէս խօսի Աւետարանիչն Մարկոս. Ո՛չ ոք բարի՝ բայց մի Աստուած ։ (2)

Հ. Զի՞նչ ասի ՚ի սուրբ գիրս զարդարութենէն Աստուծոյ.

Պ. Յարդարութիւնն Աստուծոյ. այսպէս աղաղակէ Մարգարէն Դաւիթ. Արդար ես դու Տէ՛ր. և ուղիղ են դատաստանք քո ։ (3)

Հ. Զիա՞րդ հաստատի ՚ի սուրբ գիրս մարդասիրութիւնն Աստուծոյ.

Պ. Յայտնապէս հաստատէ զայս Առաքեալն Յովհաննէս ՚ի թուղթս իւր. Աստուած սէր է . . . Նա սիրեաց զմեզ ։ (4)

Հ. Սուրբ գիրք յայտնե՞ն մեզ զգթութիւնն Աստուծոյ։

Պ. Ա՛յ. քանզի այն ոչ միայն մարդկայինս մոռաց, այլև հրեշտակաց իսկ անիմանալի՛ է.

(1). Սաղմ. ՃԼԸ. 8.
(2). Մարկ. Ժ. 18.
(3). Սաղմ. ՃԺԸ. 137.
(4). Ա. Յովհ. Դ. 3 և 19.

ըստ Առաքելոյն Պօղոսի թէ՝ Աստուած՝ որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ՚ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես ՚ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող է։ (1)

## ԳԼՈՒԽ. Բ

Յաղագս ամենասուրբ Երրորդութեան։

Հ. Արդ զի՞նչ ասէ յայտնութիւնն զէութենէ Աստուծոյ։

Պ. Ուսուցանէ մեզ՝ թէ զայն Աստուած աներևոյթ և անքննին ըստ գոյութեանն՝ է՛ մի, բայց յերիս անձինս. Հայր, Որդի և Հոգի սուրբ։

Հ. Ո՞րպէս պարտ իցէ ՚ի միտ առնուլ զայս վարդապետութիւն։

Պ. Այս այն է գերագոյն անդամ հաւատոյս մերոյ, և թէ այս անհաս խորհուրդ Երրորդութեան հաղորդեալ է մարդկան վասն հաւատալոյ և ոչ քննելոյ. սակայն է յայտնապէս հիմնեալ ՚ի գրուածս հին և նոր կտակարանի։

(1) Ա. Տիմ. Զ. 16.



Հ. Զիա՞րդ հին կտակարանն վկայէ զԵրրորդութենէ։

Պ. Ի բազում տեղիս, բայց յայտնագոյնս ՚ի բանս Անգեայ Մարգարէի. Ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ. և Բանն զոր ուխտեցի ընդ ձեզ. և Հոգին իմ՝ որ կայր ՚ի միջի ձերում։ (1)

Հ. Իսկ նոր կտակարանն հաստատէ՞ զայդ։

Պ. Պարզապէս բանիւք Յովհաննու Առաքելոյն. Երեք են՝ որք վկայեն յերկինս. Հայր, Բան և Հոգի սուրբ. և Երեքին մի են։ (2)

Հ. Ընծայէ՞ յայտնութիւնն երից անձանց ևս զվերոբերեալ Աստուածային յատկութիւնս։

Պ. Երիցն ևս հաւասարապէս. զոր օրինակ. որպէս ամենագէտ է Հայր Աստուած. Գիտէ Հայրն ձեր, զինչ պիտոյ է ձեզ (3). Նոյնպէս ամենագէտ է և Որդին Աստ. Ասէ Պետրոս ցՅիսուս. Տէր դու զամենայն գիտես. (4)։ Նմանապէս ամենագէտ է և Հոգին սուրբ. Հոգին զամենայն քննէ՝ և զխորս Աստուծոյ։ (5)

(1). Անգեայ. Բ. 6.
(2) Ա. Յովհ. Ե. 7.
(3). Մատ. Զ. 8.
(4). Յովհ. ԻԱ. 17.
(5). Ա. Կոր. Բ. 10.

Հ. Որեմն զի՞արդ մարթ իցէ զանազանել զմի անձն Երրորդութեան 'ի միւսոյն.

Պ. Սուրբ գիրք այնքան յայտնի առաջի առնեն մեզ զէական յատկութիւնս իւրաքանչիւր անձնաւորութեանն, մինչև անհնարին լինել ումեք համարել զՀայրն Ած Որդի կամ Հոգի. զՈրդին Ած Հայր կամ Հոգի. և կամ զսուրբ Հոգին Ած Հայր կամ Որդի։

Հ. Զի՞նչ գրի 'ի հանգանակի զառաջին անձնաւորութենէ Երրորդութեանն։

Պ. Առաջին անդամ. հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի. երևելեաց և աներևութից։

Հ. Զի՞նչ էական յատկութիւնք են առաջին անձնաւորութեան։

Պ. Առաջին անձնաւորութիւն ամենասուրբ Երրորդութեանն անուանեալ Հայր Ած, է անեղ, անծին և անսկիզբն, յորմէ 'ի յաւիտենից ծնեալ է Որդին. անքննաբար բղխի սուրբ Հոգին. և ստեղծեալ են ամենայն արարածք երևելիք և աներևոյթք ըստ վկայելոյ սուրբ գրոց. Աստի՝ (այսինքն 'ի Հօրէն Աստուծոյ) ամենայն նահապետութիւն յերկինս և յերկրի անուանի։ (1)



Հ. Զի՞նչ ասի 'ի հանգանակի զերկրորդ անձնաւորութենէ Երրորդութեանն։

Պ. Երկրորդ անդամ. Հաւատամք և 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս. Որդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ. Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ո՛չ արարած. նոյն ինքն 'ի բնութենէ Հօր՝ որով ամ ինչ եղև յերկինս և 'ի վր երկրի երևելիք և աներևոյթք։

Հ. Զի՞նչ են էական յատկութիւնք երկրորդ անձնաւորութեան Երրորդութեանն։

Պ. Երկրորդ անձնաւորութիւն ամենասուրբ Երրորդութեան անուանեալ Որդի Ած, է անեղ և ո՛չ բղխեալ յումեքէ. այլ 'ի յաւիտենից ծնեալ 'ի Հօրէ. որոյ մարմնաւորութեամբն փրկեցաւ ազգ մարդկան 'ի յաւիտենական մահուանէ ըստ գրոց. Միածինն Որդի՝ որ է 'ի ծոց Հօր. (2) Նա զանձն փրկանս ընդ ամենեցուն։ (3)

(1). Եփես. գ. 15։
(2). Յովհ. ա. 18։
(3). ա. Տիմ. բ. 6։

Հ. Ասա՛ն է՞ր մեծին անուանք երրին Աստուծոյ։

Պ. Յաղագս զանազանութեան ՚ի հրեշտակաց որդւոց և ՚ի մարդկանէ, զորս սուրբ գիրք նոյնպէս անուանեն որդիս Աստուծոյ ըստ շնորհաց որդեգրութեան,

Հ. Ո՞րպէս գրի ՚ի հանգամանսն զերրորդ անձնաւորութեան ամենասուրբ Երրորդութեանն:

Պ. Ութերորդ անդամ. Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին յանեղն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ՚ի Մարգարէս և յԱւետարանս. որ էջն ՚ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ՚ի սուրբսն։

Հ. Ո՞րք են էական յատկութիւնք երրորդ անձնաւորութեան Երրորդութեանն:

Պ. Երրորդ անձնաւորութիւն ամենասուրբ Երրորդութեանն անուանեալ Հոգի սուրբ՝ է անեղ և անծին, այլ ՚ի յաւիտենից բղխեալ ՚ի Հօրէն Աստուծոյ որպէս սուրբ գիրք վկայեն. Հոգին ճշմարտութեան՝ որ ՚ի Հօրէ ելանէ։(1)

Հ. Եւ արդ՝ երեքս միանգամ երեք Աստուածք իցեն։

Պ. Ոչ. քանզի յայտնութիւնն ուսուցանէ մեզ հաւատալ, թէ յերիս անձինս է մի

(1) Յովհ. ժե. 26։



Աստուածութիւն Հայր, Որդի և Հոգի սուրբ և սոքա երեքեան մի են։(1)

Հ. Ո՞նչ ներգործութիւնս ընծայեն սուրբ գիրք Երրորդութեանն։

Պ. Նախասահմանութիւն, արարչութիւն և խնամարկութիւն։

Հ. Ո՞նչ է նախասահմանութիւնն Աստուածային։

Պ. Նախասահմանութիւն է խորհուրդ եւանձն նորայ Աստուածութեանն, որով զամենայն ինչ որ միանգամ կատարի ՚ի ժամանակի. նախանշանակէ ՚ի յաւիտենից առնել կամ ոչ։(2)

Հ. Ո՞րպէս պարտ է իմանալ զնախասահմանութիւնն Աստուծոյ ընդհանրապէս։

Պ. Թէ այն է ըստ ամենայնի անկախ զիմէքէ և ազատ. (3) ամենիմաստ և անխափանելի.(4) ինքնիշխան և անփոփոխ։(5)

(1) . ա. Յովհ. ե. 7։
(2) . Ոչ են խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր. ասէ Տէր. Եսայ. ծե. 3։
(3) . Այո, Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո. Մատ. ժա. 26։
(4) . Որպէս անքննելի են դատաստանք նորա և անքննելի են ճանապարհք նորա. Հռովմ. ժա. 33։
(5) . Ամենայն խորհուրդք իմ հաստատեսցին. և զամենայն զոր կամիմ արարից. Եսայ. խզ. 10։

Հ. Զո՞ր նախասահմանութենէն Աստուծոյ առանձինն խօսին սուրբ գիրք։

Պ. Դիտաւորութեանն՝ թէ նախասահմանեաց Ա՛ծ ստեղծագործել զաշխարհս և առաքել զՈրդին իւր յերկիր վասն փրկութեան ազգի մարդկան՝ անկելոյն Ադամայ։ (1)

## ԳԼՈՒԽ. Դ

Յաղագս արարչութեանն Աստուծոյ։

Հ. Զի՞նչ գծեալ են նախասահմանութեանն Աստուծոյ

Պ. Աստուած առ կատարումն նախասահմանութեան իւրոյ ՚ի սկզբան ստեղծ զաշխարհս։ (2)

Հ. Զի՞նչ նշանակէ անունդ ստեղծագործութիւն։

Պ. Ստեղծագործութիւնն է ներգործութիւն ամենակարող Աստուածութեանն, որով ամենայն երևելի և աներևոյթ արարածք յոչ գոյէ ՚ի գոյութիւն ածան։

Հ. Վասն է՞ր ստեղծագործեաց Աստուած զաշխարհս։

(1). Խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ՚ի փառս մեր։ ա. Կորն. բ. 7։

(2). Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր։ Ծննդ. ա. 1։



Պ. Նախ՝ ՚ի փառս անուան իւրոյ. (1) երկրորդ՝ յօգուտ և ՚ի վայելս մարդոյ։ (2)

Հ. Զիա՞րդ արարչագործեաց Աստուած զաշխարհս։

Պ. Յանէից, միով ամենազօր բանիւ իւրով, (3) ՚ի վեց աւուրս (4)։

Հ. Զի՞նչ ստեղծ Աստուած յառաջնում աւուր։

Պ. Զամենայն անկերպարան գոյացութիւն յորոց աշխարհս բաղկանայ, զերկնայինս և զերկրայինս ՚ի միասին ընդ որս և զլոյսն։ (5)

Հ. Զի՞նչ յերկրորդում աւուր։

Պ. Ալեց զսահմանեալ ընդարձակութիւն տիեզերաց օդով. և ստեղծեալ զհաստատութիւնն՝ կոչեաց երկին։ (6)

(1). Ամենայն հոգիք օրհնեսցե՛ք զՏէր։ Սաղմ. ճծ. 6։

(2). Երկինք երկնից Տեառն են և զերկիրս ետ որդւոց մարդկան։ Սաղմ. ճժդ. 16։

(3). Նա ասաց, և եղեն. ինքն հրամայեաց, և հաստատեցան։ Սաղմ. լբ. 9։

(4) կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդի զգործս իւր։ Ծննդ. բ. 2։

(5). Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր և երկիր էր աներևոյթ և անպատրաստ..., և ասաց Աստուած եղիցի լոյս։ Ծննդ. ա. 1. 2. 3։

(6). Եւ արար Աստուած զհաստատութիւնն..., և կոչեաց զհաստատութիւնն երկին. և եղև երեկոյ և եղև վաղորդայն օր երկրորդ։ Ծննդ. ա. 7. 8։

Հ. Զի՞նչ յերրորդում աւուր։

Պ. Անջրպետեաց զջուրն 'ի հողոյ՝ որով երեւեցան ծովք, լիճք, գետք և աղբիւրք. (1) Իսկ երկիր բղխեաց զսերմանիս պտղաբերութեան որ և բուսոյց յինքենէ զամենայն խոտս, ծաղկունս և զծառս։ (2)

Հ. Զի՞նչ յաւուր չորրորդի։

Պ. Զլուսաւորս երկնից՝ զարեգակն, զլուսին և զաստեղս, կարգաւորելով զժամանակս ըստ պահանջելոյ փոխադարձ կապակցութեան նոցա։ (3)

Հ. Զորպիսի արարածս հաստատեաց Աստուած յառաջին չորս աւուրս։

Պ. Զանկենդանս։

Հ. Իսկ յաւուր հինգերորդի՞։

Պ. Զկենդանականս. զամենայն ազգս ձկանց

(1). Եւ ասաց Աստուած. ժողովեսցին ջուրք՝ որք 'ի ներքոյ երկնից 'ի ժողով մի և երեւեսցի ցամաքն։ Ծննդ. ա. 9։

(2). Եւ ասաց Աստուած. բղխեսցէ երկիր դալարս խոտոյ.. և ծառ պտղաբեր.. և եղև այնպէս.. և եղև երեկոյ և եղև վաղորդայն օր երրորդ։ Ծննդ. ա. 11 և 13։

(3). Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն զմեծամեծս. զլուսաւորն մեծ՝ յիշխանութիւն տուընջեան և զլուսաւորն փոքր՝ յիշխանութիւն գիշերոյ և զաստեղս... և եղև երեկոյ և եղև վաղորդեան օր չորրորդ։ Ծնն. ա. 16. և 19։



և թռչնոց, կամ զամենայն կենդանիս՝ որք լողան 'ի ջուրս և թռչին ընդ օդս։ (1)

Հ. Զի՞նչ արար Աստուած յաւուրն վեցերորդի։

Պ. Նախ՝ ստեղծ զցամաքային կենդանիս. զգազանս, զանասունս և սողունս (2) և ապա զգերագոյնն յարարածս իւր՝ զմարդն։ (3)

Հ. Զի՞նչ նկարագրէ յայտնութիւնն զարարչութիւն նախաստեղծից։

Պ. Զմարմին նախամարդոյն Ադամայ ստեղծ Աստուած 'ի հողոյ և կենդանացոյց բանական և անմահ հոգւով (4) յօգնութիւն նմին տա–լով զկինն Եւայ զոր արար 'ի կողէն Ադա–

(1). Եւ արար Աստուած կէտս մեծամեծս, և զամենայն շունչ զեռնոց կենդանեաց, զոր հանին ջուրք ըստ ազգի իւրեանց և զամենայն թռչունս թեւաւորս ըստ ազգի. և եղև երեկոյ և եղև վաղորդայն օր հինգերորդ։ Ծննդ. ա. 21 և 23։

(2). Եւ արար Աստուած զգազանս երկրի ըստ ազգի և զանասունս ըստ ազգի և զամենայն սողունս երկրի ըստ ազգի իւրեանց։ Ծննդ. ա. 25։

(3). Եւ արար Աստուած զմարդն.. արու և էգ արար զնոսա... և եղև երեկոյ և եղև վաղորդայն օր վեցերորդ։ Ծննդ. ա. 27. 31։

(4) Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի։ Ծնն. բ. 7. 22։

մայ 'ի լինել նորա 'ի քուն. (1) և զերկոսեան զնոսա զարդարեաց 'ի պատկեր իւր և 'ի նմանութիւն ։ (2)

Հ. Զ՞ինչ է պատկեր և նմանութիւն Աստուծոյ.

Պ. Սրբութիւն, արդարութիւն, անմեղութի՛ և մաքրութիւն բանական և անմահ հոգւոյ նախաստեղծից. (3) Եւ և իշխանութիւնն՝ զոր շնորհեաց նոցա Աստուած 'ի վերայ ամենայն ենթալուանեայց՝ որովք և նմանեցան նոքա Արարչապետի և Տեառն տիեզերաց, (4)

Հ. Զիա՞րդ կորուսին նախաստեղծք զպատկեր Աստուծոյ.

Պ. Զանցանելով զպատուիրանաւ Աստուծոյ։

Հ. Զո՞րով պատուիրանաւ Աստուծոյ ապախտ արա՞րին նոքա։

Պ. Եդեալ զնոսա Աստուծոյ 'ի դրախտին՝ հրամայեաց անճաշակ մնալ 'ի պտղոյ ծառոյն գիտութեան բարւոյ և չարի. զմահուանն լի-

(1). Եւ շինեաց Տէր Աստուած զկողն, զոր եառ յԱդամայ 'ի կին. Ծնն. բ. 22.

(2). Եւ արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու և էգ արար զնոսա։ Ծնն. 1. 27.

(3) Զայս ահա գտի. զի արար Աստուած զմարդն ուղիղ. Ժող. է. 30.

(4). Եւ օրհնեաց զնոսա Աստուած և ասէ... լցէք զերկիր և տիրեցէք դմա և իշխեցէք. Ծնն. ա. 23.



նել նորա կանխաւ յայտնելով. (1) բայց նոցա անփոյթ արարեալ զկենսաբաշխ պատուիրանէն՝ կերան յարգելեալ պտղոյն, որով որպէս ինքեանք, նոյնպէս և համօրէն ծնունդք նոցա ենթարկեցան և ժամանակեայ և յաւիտենական մահուան. (2) ուստի այս պատուիրանազանցութիւն նախաստեղծից անուանի մեղք սկզբնական՝ որով զգածեալ է բնութիւն մարդկան ։

Հ. Ո՞րք են աներեւոյթ արարածք.

Պ. Հրեշտակք և հոգիք մարդկան ։

Հ. Հաստատե՞ն սուրբ գիրք զարարչութիւնն հրեշտակաց յԱստուծոյ և զգոյութիւն նոցա։

Պ. Զառաջինն յայտնապէս ընծայէ Աստուածոյ Մարգարէն Դաւիթ՝ ասելով. Ա՛րար զհրեշտակս իւր յոգիս. (3 իսկ զերկրորդն՝ Քրիստոս հաստատէ, յասելն՝ Յորժամ եկեա-

(1). 'Ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի ուտիցէք զի յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ՝ մահու մեռանիցիք։ Ծնն. բ. 17.

(2). Զի որպէս 'ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին և 'ի մեղաց անտի մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ. որով ամենեքեան մեղան. Հռովմ. ե. 12.

(3). Սաղմ. ճգ. 4.

չէ Որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա ։ (1)

Հ. Ուստի՞ արարած է հրեշտակն.

Պ. Հրեշտակն է հոգի անմահ, բանական, ազատ և սուրբ ։

Հ. Եւ ի՞նչ վախճան ստեղծման.

Պ. Ի փառաբանութիւն մեծութեան Աստուծոյ. ի սպասաւորութիւն կամաց նորա և յերջանկութիւն անվախճան ։ (2)

Հ. Ամենայն հրեշտակք մնացի՞ն յերանութեան իւրեանց։

Պ. Ոչ. ոմանք ի նոցանէ զրկեցան յայնմանէ ապստամբեալք յԱստուծոյ. ուստի դևք կոչին այժմիկ ։ (3)

Հ. Զի՞նչ է հոգի մարդոյ։

Պ. Գոյացութիւն բանական, ազատ և անմահ ։ (4)

Հ. Ապա թէ այդպէ՞ս իցեն և հոգիք անասնոց.

Պ. Ոչ. հոգիք անասնոց ոչ բանականք են և

(3). Մատ. իե. 31.

(1). Օրհնեցէք զՏէր ամենայն հրեշտակք նորա... որք առնէք զբանն նորա։ Սաղմ. ճբ. 20.

(1). Զհրեշտակս որք ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւն, այլ թողին զիւրեանց բնակութիւն, ի դատաստան մեծի աւուրն մշտնջենաւոր կապանօք պահեաց ի խաւարի. Յուդ. ա. 6:

(2). Դարձցի հողն յերկիր՝ որպէս և էրն. և հոգին դարձցի առ Աստուած, որ ետ զնա. Ժողով. ժբ. 7.



ոչ անմահք. այլ ընդ մարմնոցն նոցա չքանան ։ (1)

## ԴԱՍ ԺԴ.

### Յաղագս խնամարկութեանն Աստուծոյ ։

Հ. Յետ վեցօրեայ արարչութեանն իսպառ դադարեցա՞ւ Աստուած ի ներգործելոյ։

Պ. Ոչ. քանզի թէպէտ և դադարեցաւ Աստուած յայնմհետէ ի ստեղծանելոյ զնորանոր արարածս, սակայն սուրբ Գիրք ասեն զնմանէ գործել մինչև ցայժմ ։ (2)

Հ. Զի՞նչ նշանակէ գործել նորա մինչև ցայժմ ։

Պ. Խնամարկել նորա զաշխարհս ։

Հ. Զի՞նչ է խնամարկութիւն Աստուածային ։

Պ. Խնամարկութիւն է ներգործութիւն ամենասուրբ Երրորդութեան (3) որով ամե-

(1). Զարիւն ամենայն մարմնոյ մի ուտիցէք, զի շունչ ամենայն մարմնոյ արիւն իւր է։ Ղևտ. ժէ. 14։

(2). Հայր իմ մինչև ցայժմ գործէ։ Յովհ. ե 17։

(3). Հայր իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ։ Յովհ. ե. 17։
Առաքես զոգի քո և ստանաս զնոսա. Սաղմ. ճգ. 30

նայն արարածք պահպանին. (1) և ուղղին առ վախճան բարի ։ (2)

Հ. Զի՞նչ է պահպանութիւն արարածոց ։

Պ. Ներգործութիւն խնամարկութեանն Աստուծոյ որով զգոյութիւն, զկատարութիւն և զզօրութիւն ամենայն արարածոց պահպանէ որքան և կամի ։ (2)

Հ. Կարիցե՞ն արարածք անձամբ անձին կեալ առանց պահպանութեանն Աստուծոյ ։

Պ. Ո՛չ. զի որպէս եթէ ոչ յԱստուծոյ հաստէին գոլ ոչ կարէին, նոյնպէս եթէ ոչ առ ՚ի նմանէ պահպանեսցին. իսկ և իսկ դարձցին ՚ի չէք ։ (3)

Հ. Յի՞նչ կայանայ կառավարութիւն արարածոց ։

Պ. Կառավարութիւնն է գործ խնամարկութեանն Աստուծոյ, որով զներգործութիւնս ամենայն արարածոց տնօրինէ ՚ի փառս իւր,

(1) Նա (Աստուած) տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ. Զի նովաւ կեամք և շարժիմք և եմք ։ Գործք. ժէ 2 25. 28

(2) Քո, Հայր, վարէ տեսչութիւնդ. . . կամիս զի մի դատարկացի գործ իմաստութեանն ։ Իմաստ, ժդ. 3. 5 ։

(3). Հրամանի քում մնայ տիւ, զի ամենեքեան ծառայք քո են ։ Սաղմ. ճժը. 91 ։

(4). Հանես զոգի ի նոցանէ՝ պակասին ։ Ընդ. ճգ. 29.



յօգուտ աշխարհի, և մանաւանդ արդարոց ։ (1)

Հ. Կարիցե՞ն արարածք առանց այսորիկ կալ ՚ի կարգի.

Պ. Ո՛չ. այլ ունին շփոթիլ և եղծանիլ իսպառ. (2)

Հ. Զիա՞րդ տնօրինէ Աստուած զգործողս մարդկան ։

Պ. Ի՛ ձեռն ամենագէտ տեսչութեան իւրոյ. (3) մերթ յաջողելով. (4) մերթ լքանելով. (5) մերթ ևս արգելլով (6) զամենայնն առ վախճան բարի ուղղէ ։ (7)

Հ. Զո՞րպիսի գերագոյն ներգործութիւն խնամարկութեանն Աստուծոյ բացայայտեն մեզ սուրբ գիրք ։

Պ. Գերապանծ գործ խնամարկութեանն Աստու-

(1). Ոչ այլ Աստուած գոյ բաց ի քէն՝ որում փոյթ իցէ վասն ամենեցուն. . . Արդար ես և արդարութեամբ վարես զամենայն ։ Իմաստ. ժբ. 13. 15 ։

2. Դարձուցանես զերեսս քո ՚ի նոցանէ և խռովին ։ Սաղմ. ճգ. 29.

(3). Դու Տէր ծանեար զյետին իմ և զառաջին իմ. Սաղմ. ճլը. 5 ։

(4). Քարոզէին ընդ ամենայն երկիր Տեառն գործակցութեամբ ։ Մարկ. ժզ. 20 ։

5. Թոյլ ետ ամենայն հեթանոսաց գնալ ի ճանապարհս իւրեանց ։ Գործ. ժդ. 15 ։

(6). Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի և դադարեցին ՚ի շինելոյ զքաղաքն և զաշտարակն ։ Ծննդ. ժա. 8 ։

(7). Դուք խորհեցայք զինէն ՚ի չարութիւն. և Աստուած խորհեցաւ վասն իմ ՚ի բարութիւն ։ Ծննդ. ծ. 20 ։

տուածոյ է պարգևել մարդոյն զառաջին երջանկութիւն, զոր կորոյս Ադամ և տնօրէնել զփրկութիւն նորին ՚ի ձեռն մարմնաւորութեան միածնին և նախայաւիտեան Որդւոյն Աստուծոյ: (1)

## ԳԼՈՒԽ Ն.

Յաղագս մարմնաւորութեան Որդւոյն Աստուծոյ:

Հ. Զի՞նչ իմանամք անուամբ մարմնաւորութիւն:

Պ. Մարմնաւորութիւն Աստուածորդւոյն նշանակէ առումն մարդկայինս բնութեան՝ որով յԱստուածային և ՚ի մարդկային բնութեանց անձնաւորաբար միաւորելոց՝ եղև Աստուածամարդ: (2)

Հ. Կարևո՞ր էր մարմնաւորութիւն Աստուածորդւոյն:

Պ. Անշուշտ. քանզի պահանջելով արդարութիւնն Աստուծոյ զբաւականութիւն՝ դատա-

(1). Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ՚ի նա, մի կորիցէ այլ ընկալցի զկեանս յաւիտենականս: Յովհ. գ. 16.
(2). Մեծ է խորհուրդն Աստուածպաշտութեան, որ երևեցաւ մարմնով. ա. Տիմ. 4. 16.



պարտեաց զմարդն ՚ի մահ յաւիտենական (1) վասն զանցանելոյ նորա զպատուիրանաւ իւրով. և որովհետև ոչ մարդս իւրովին, և ոչ այլ ինչ յեղականացս բաւէին ջնջել զայս անհուն մեղս առաջի Աստուծոյ, վասն որոյ հաճեցաւ ողորմութիւն Աստուծոյ ՚ի ձեռն մարդեղութեան Որդւոյն յաջողել զարդարացուցումն մարդոյն և փրկել զնա ՚ի մշտնջենական կորստենէ. (2)

Հ. Վասն է՞ր կարևոր եղև Աստուածորդւոյն առնուլ զմերս բնութիւն ՚ի գործ միջնորդութեանն:

Պ. Վասն այնորիկ՝ զի Հայրն երկնաւոր ՚ի գործ փրկութեան մերոյ վարէր ընդ նմա իբրև ընդ միջնորդի մերում և իբր ընդ նոյն իսկ մարդոյն՝ զորոյ էր առնել զկերպարան. զի հնար լինէր նմա մեռանել մարդկութեն և մահուամբ իւրով ունայնացուցանել զանէծս յաւիտենական մահուն՝ որ սահմանեալ էր մարդոյն:

(1). Ի միջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին և ի մեղաց անտի մահ. Հռովմ. ե. 12:
(2). Աստուած որ մեծն է ողորմութեամբ վասն բազում սիրոյ զոր սիրեաց զմեզ. մինչդեռ մեռեալք էաք ի մեղս մեր՝ կենդանիս արար զմեզ ի Քրիստոս: Եփես. բ. 5:

Պ. Զօրաւո՞ր եղև մարմնացեալ բանն հաճել զԱստուած վասն մեղաց մարդկան:

Պ. Աներկբայ. նմա միայնոյ էր լինել միջնորդ առաջի Ա՟Յ վասն մարդոյ Աստուածամարդ գոլով. ըստ գրոյ՝ Մի է միջնորդ Ա՟Յ և մարդկան՝ մարդն Յ՟ս Ք՟ս. (1) որ և զօրաւոր եղև շարժել զԱստուած յողորմութիւն մարդկան, ըստ բացատրելոյ սուրբ գրոյ. Ամենայն ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյց զմեզ ընդ իւր ՚ի ձեռն Քրիստոսի: (2)

Հ. Զի՞արդ պարտ իցէ իմանալ զԱստուածային նախասահմանութիւն վասն բանին մարմնառութեան:

Պ. Թէ Աստուած ըստ ամենագէտ տեսչութեան իւրոյ նախասահմանեալ էր զայս ՚ի յաւիտենից. ուստի և Ք՟ս անուանի Գառն զենեալ ՚ի սկզբանէ աշխարհի: (3)

Հ. Յայտնեաց Աստուած երբէք մարդկան զնախասահմանութիւն իւր վասն բանին մարմնառութեան:

Պ. Աստուած խոստացաւ զառաջինն նախաստեղծից յետ անկման նոցա՝ առաքել յաշ-

(1). ա. Տիմ. բ. 5:

(2). բ. Կորն. ե. 18:

(3). Յայտ. ժգ. 8:



խարհ զՓրկիչ, (1) զորմէ ապա յայտնեաց հաւատացելոց օրինակօք և մարգարէութեամբք: (2)

Հ. Զի՞նչ օրինակք էին Աստուածորդւոյն մարմնառութեան:

Պ. Մտանել քահանայապետին միանգամ ՚ի տարւոջն ՚ի սրբութիւն սրբութեանց՝ նշանակէր զմիջնորդութիւն նորա վասն մեր առաջի Ա՟Յ. (3) օձն պղնձի կախեալ զփայտէ ՚ի բժշկութիւն հաւատացելոց զ՚ի խաչի մահ նորա. (4) Գառն զատկական՝ զոր ուտէին իսրայէլացիք ՚ի յիշատակ ելից իւրեանց յԵգիպտոսէ՝ զազատութիւն մեր զենմամբ նորին. (5) և այլն:

(1). Ասէ Տէր Աստուած ցօձն. . . եդից թշնամութիւն ՚ի մէջ քո և ՚ի մէջ կնոջդ. ՚ի մէջ զաւակի քո. և ՚ի մէջ զաւակի նորա. Նա սպասեսցէ քում գլխոյ: Ծնն. գ. 14 և 15:
(2). Բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր Մարգարէիւք. Եբր. ա. 1:
(3). Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոցն բարեաց. . անձեռագործ խորանաւ. . . և ոչ արեամբ նոխազաց և զուարակաց, այլ իւրով արեամբ եմուտ միանգամ ՚ի սրբութիւնսն՝ յաւիտենական գտեալ զփրկութիւն. Եբր. թ. 11. և 12:
(4). Որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ. Յովհ. գ. 14:
(5). Առցեն իւրեանց իւրաքանչիւր ոչխար. . . Ոչխար կատարեալ՝ արու, տարևոր, անարատ. փութանակի ուտիցէք, զի զատիկ Տեառն է: Ելից. ժբ. 3. 5. և 11: տես և Յայտ. ժ.

Դ. Որպիսի մարգարէութիւնք եղեն զԱստուածորդւոյն մարմնաւորութենէ։

Պ. Այսմ ժամանակի մարմնաւորութեան նորա ասացաւ ՚ի ձեռն Մովսէսի մարգարէին. Ոչ պակասեսցի իշխան ՚ի Յուդայ և մի՛ պետ յերանաց նորա մինչև եկեսցեն նմա հանդերձեալքն. և նա է ակնկալութիւն հեթանոսաց. (1) Յաղագս ծագման նորա ըստ մարմնոյ յազգէ Դաւթի՝ գուշակեաց Մարգարէն Երեմիաս. Ահա աւուրք գան ասէ Տէր՝ և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան. (2) Զծննդենէ նորա ՚ի կուսէն՝ մարգարէացաւ Եսայիաս. Ահա կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած. (3) Իսկ զտեղւոյ ծննդեան նորա նախաձայնեաց Միքիէ Մարգարէ. Դու Բեթղեհեմ տուն Եփրաթայ սակաւաւոր՝ իցես լինել ՚ի հազարաւորս Յուդայ։ ՚Ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի՝ և ելք նորա ՚ի սկզբանէ աւուրց աշխարհի։ (4)

(1). Ծննդ. խթ. 10.
(2). Երեմ. իգ. 5.
(3). Եսայ. է. 14.
(4). Միք. ե. 2.



Դ. Որպիսի մարգարէութիւնք եղեն զմարմնացեալ Որդւոյն Աստուծոյ։

Պ. Ովսէէ մարգարէացաւ զփախստենէ նորա յԵգիպտոս և զդարձէն անտի. յԵգիպտոսէ կոչեցի զորդի իմ։ (1) Զաքարիաս՝ զմեծահանդէս մուտս նորա յԵրուսաղէմ. Ցնծա՛ դուստր Երուսաղէմի. ահա թագաւոր քո գայ առ քեզ. արդար և փրկիչ. նոյն հեզ և հեծեալ ՚ի վերայ իշոյ՝ և յաւանակի նորոյ. (2) Եսայիաս՝ զչարչարանաց նորա և զմահուանէն. Տեսաք մեք զնա՝ և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն. այլ տեսիլ նորա անարգ. և նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան. Նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց. Իբրև ոչխար ՚ի սպանդ վարեցաւ. իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ..։ Յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ ՚ի մահ վարեցաւ։ (3) Դաւիթ՝ զյարութենէ նորա. Ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։ (4) Զհամբարձմանէ նորա յերկինս. Ել ՚ի բարձունս

(1). Ովսէէ. ժա. 1.
(2). Զաքար. թ. 9.
(3). Եսայ. ծգ. 2. 3. 5. և 8.
(4). Սաղմ. ժե. 10.

գերեաց զգերութիւն. (1) և Օծանելոյ նո-րա ընդ աջմէ Աստուծոյ Հօր. Ասաց Տէր ցՏէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ։ (2)

Հ. Վասն է՞ր զմարգարէութիւնդ զայդոսիկ վերածեմք յանձն Յիսուսի Քրիստոսի։

Պ. Վասն այնորիկ՝ զի Յիսուս Քրիստոս ըստ խոստմանց և մարգարէութեանց (3) յանցա-նել Թագաւորութե՛ Հրէից ՚ի ձեռս Հռով-մայեցւոց(4)՚ի սերնդոցն Աբրահամու՝ ՚ի ցե-ղէն Յուդայի յազգէ Դաւթի (5) յղացեալ ՚ի Նազարէթ ներգործութե՛ Հոգւոյն սրբոյ. ծնաւ ՚ի Բեթղեհէմ ՚ի Մարիամայ կուսէն։ (6)

Հ. Զի՞արդ անուանեցաւ Աստուածորդին ի ժամանակի մարմնաւորութեանն,

Պ. յԱստուծոյ ՚ի ձեռն հրեշտակին անուա-նեցաւ Յիսուս, որ Հրէարէն փրկիչ լսի. վ՟

(1) Սաղմ. կէ. 19.
(2) Սաղմ. ճթ. 1։
(3) Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն և Մարգարէք, գտաք զՅիսուս։ Յովհ. ա. 45։
(4) Յաւուրս Հերովդէի արքայի։ Մատ. բ. 1։
(5) Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու. Մատ. ա. 1։
(6) Առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ՚ի քաղաք մի Գալիլեացւոց որում անուն էր Նազարէթ առ կոյս։ Ղուկ. ա. 26։



փրկելոյ նորա զազգ մարդկան ՚ի յաւիտենից մահուանէ։ (1)

Հ. Զի՞արդ ևս.

Պ. Քրիստոս՝ որ Յունարէն օծեալ թարգ-մանի. (2) և այս վասն այնորիկ՝ զի ՚ի հնումն օծանէին Քահանայք. (3) Թագաւորք. (4) և Մարգարէք. (5) և որովհետև Յիսուս զայսո-սիկ երիս աստիճանս իսկ ունէր յինքեան, վ՟ որոյ և կոչեցաւ Քրիստոս։ (6)

(1) Կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժո-ղովուրդ իւր ՚ի մեղաց իւրեանց։ Մատ. ա. 21։
(2) Ասէ ցնոսա Պիղատոս. զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՞, եթէ զՅիսուս զա-նուանեալն Քրիստոս։ Մատ. իէ. 17։
(3) Կարկ Մովսէս յիւղոյ օծութեանն ի գլուխն Ահա-րոնի և էօծ զնա և սրբեաց զնա։ Ղևտ. ը. 12։
(4) Էառ Սամուէլ զսրուակն իւղոյ և եհեղ ի գլուխ Սաւուղայ... և ասէ ցնա՝ էօծ զքեզ Տէր ի վերայ ժառան-գութեան իւրոյ իշխան։ Ա. Թագ. ժ. 1։
(5) զԵղիսէէ որդի Սափաթայ... օծցես ՚ի մարգարէ փո-խանակ քո։ Գ. Թագ. ժթ. 16։
(6) Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսե-դեկի։ Եբր. ե. 17։ Զամենայն ինչ հնազանդ արար (Աստուած) ՚ի ներքոյ ոտից նորա և զնա ետ ի գլուխ ի վերայ ամենայն Եկեղեցւոյ։ Եփես. ա. 22։ Հոգի Տեառն ի վերայ իմ. վասն որոյ և էօծ իսկ զիս աւետարանել աղքատաց։ Ղուկ. դ. 18։

Հ. Զի՞նչ գրի ՚ի հանգանակին վասն մարմնաւորութեան Որդւոյն Աստուծոյ։

Պ. Երրորդ անգամ. Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից. մարմնացաւ. մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։

Հ. Զի՞նչ ուսանիմք ըստ այդմ անգամոյ հանգանակիդ։

Պ. Թէ Որդին Աստուծոյ ըստ ողորմութեանն իւրում առ մեզ մեղաւորքս՝ էջ յերկնից վասն մերոյ փրկութեան, ծնաւ իջմամբ Հոգւոյն սրբոյ ՚ի կուսէն Մարիամայ. էառ զմարդկային մարմին՝ և եղև մարդ կատարեալ բաց ՚ի մեղաց։

Հ. Զի՞նչ գործէր յերկրի Որդին Աստուծոյ զկնի մարմնաւորութեանն իւրոյ։

Պ. Ցուցանելով մարդկան զճանապարհ հաշտութեան ընդ Աստուծոյ, յայտնէր զսուրբ կամս նորա. քարոզէր զապաշխարութիւն և զաստուածգիտութիւն ճշմարիտ. (1) հրաշագործէր ՚ի բժշկութիւն ախտաժետաց. (2)

(1). Հոգի՝ է Աստուած և երկրպագուաց նորա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել. Յովհ. դ. 24

(2). Բազումք հաւատացին յանուն նորա զի տեսանէին զնշանս՝ զոր առնէր. Յովհ. բ. 23։



ուսուցանէր յամենայն սրտէ և յամենայն անձնէ ծառայել Աստուծոյ. (1) հաւատալ ՚ի նա որպէս յԱստուածառաք փրկիչ. (2) սիրել զբարեկամս և զթշնամիս. (3) և բացայայտէր թէ յի՞նչ կայանայ ճշմարիտ երջանկութիւն մարդկան։ (4)

Հ. Զի՞նչ ևս յայտնեն մեզ գիրք զՅիսուսէ Քրիստոսէ։

Պ. Զերկեակ վիճակ նորա՝ զնուաստութեան և զփառաւորութեան. զորս բացերևակի նկարագրէ Առաքեալն Պօղոս Զանձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ՝ ՚ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ. խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ, և մահու խաչի,

(1). Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն մտաց քոց։ Մատ. իբ. 37։

(2). Այս են կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանէ զՈրդի և հաւատայ ՚ի նա, ընկալցի զկեանս յաւիտենականս. Յովհ. զ. 40։

(3). Սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց։ Մատ. ե. 44։

(4). Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից. Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին. Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին. Մատ. ե. 3. 4. 5. 6. մինչև ց12։

վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ 'ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց:(1)

Հ. Զի՞նչ գրի 'ի հանգանակի զվիճակէ նուաստութեան նորա:

Պ. Չորրորդ անդամ. Չարչարեալ, խաչեալ, Թաղեալ:

Հ. Զի՞նչ դաւանիմք ըստ այդմ անդամոյ հանգանակիդ:

Պ. Թէ Յիսուս Քրիստոս 'ի ցոյց մեծի սիրոյն իւրոյ առ մեզ և 'ի մերս փրկութիւն,(2) չարչարեցաւ 'ի Հրէից առ Պիղատոսիւ. որ էր դատաւոր Հրէաստանի կարգեալ 'ի Հռովմայեցւոց. բևեռեցաւ 'ի նոցանէ 'ի խաչափայտի, և յերեկոյի այնր աւուր յետ մահուանն՝ բարձաւ 'ի խաչէ և Թաղեցաւ 'ի գերեզմանի:

Հ. Վասն է՞ր չարչարեցաւ Քրիստոս առ իշխանութեամբն Պիղատոսի:

Պ. Զի վկայ լինէր հեթանոս և այլազգի դա-

(1). Փիլիպ. բ. 7. 8. 9. և 10.

(2). Մեծ ես քան զայս սէր ո՛չ ոք ունի՝ եթէ զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց: Յովհ. ժե. 13.



տաւորն անմեղութեան նորա.(1) և մեք հաւատայաք, թէ նա ո՛չ վասն մեղաց ինչ իւրոց, այլ կամաւորապէս վասն մերոց յանցանաց յանձն էառ զչարչարանս և զմահ,

Հ. Զիա՞րդ պարտ է իմանալ զչարչարանսն Քրիստոսի:

Պ. Քրիստոս չարչարեցաւ մարմնով և ո՛չ Աստուածութեամբ. զի Աստուածութիւն անչարչարելի՛ է. թէև 'ի մարդկութենէն անբաժան մնայր յայնժամ 'ի նմա:

Հ. Զիա՞րդ զմահն Քրիստոսի.

Պ. Քրիստոս ճշմարտապէս մեռաւ մարմնով և մահուամբն իւրով ելոյծ զանէծս յաւիտենական մահուն՝ յոր ազգ մարդկան դատապարտեալ էր յԱստուծոյ:

Հ. Զի՞նչ ասի 'ի հանգանակին զվիճակէ փառաւորութեանն Քրիստոսի:

Պ. Հինգերորդ անդամ. Յերրորդ աւուր յարուցեալ:

Հ. Զի՞նչ ըստ այսմ անդամոյ հանգանակիդ խոստովանիմք:

Պ. Թէ Յիսուս Քրիստոս կատարեալ զգործ

(1). Ել դարձեալ Պիղատոս արտաքս և ասէ ցնոսա (ցՀրէայս) ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես վնաս ինչ ի նմա (ի Քրիստոս) ոչ գտանեմ: Յովհ. ժթ. 4.

փրկութեան մերոյ՝ յաւուր երրորդի յետ մահուան իւրոյ՝ յարեաւ զօրութ Աստուածութեն ՚ի գերեզմանէ ըստ վկայելոյ Առաքելական գրոց. (1) որոց և բազում անգամ երևեցաւ յետ յարութեան ՚ի փառաւորեալ մարմնի ։ (2)

Հ. Զի՞նչ եցոյց Քրիստոս յարութեամբ իւրով՝

Պ. Թէ ինքն է ճշմարիտ Մեսիայ. յԱստուծոյ խոստացեալ Փրկիչ ազգի մարդկան. նոյնպէս ճշմարտեաց զսեփական նախաձայնութիւն զյարութենէ իւրմէ (3) ՚ի մեռելոց, և աներկբայ հաստատեաց զյոյս ընդհանրական յարութեան մերոյ ։ (4)

(1). (Քրիստոս) է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որ է սկիզբն՝ անդրանիկ ի մեռելոց։ Կողոս. ա. 18.

(2). Զայս երիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն յարուցեալ ի մեռելոց։ Յովհ. իա. 14. Եւ դրացն փակելով ուր էին աշակերտքն ժողովեալք վասն ահին Հրէից եկն Յիսուս և եկաց ի միջի նոցա, և ասէ ցնոսա, Ողջո՜յն ընդ ձեզ. իբրև զայս ասաց եցոյց նոցա զձեռսն և զկողս իւր, Յովհ. ի. 19 և 20.

(3). Զի որպէս էր Յովնան ՚ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս. այնպէս եղիցի և որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս։ Մտ. ժբ. 40.

(4). Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց առաջին պտուղ ննջեցելոց. . Որպէս Ադամաւն ամենեքեան մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցին. ա. Կորն. ժե. 20, և 22.



Հ. Զի՞նչ ևս աւանդի ՚ի հանգանակի զվիճակէ փառաւորութեան նորա։

Պ. Վեցերորդ անդամ. Ելեալ ՚ի յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ Հօր ։

Հ. Զի՞նչ դաւանիմք ըստ այսմ անդամոյ հանգանակիդ

Պ. Թէ Յիսուս Քրիստոս ՚ի քառասներորդում աւուր զկնի յարութեան իւրոյ՝ յառաջիկայութեան Առաքելոց իւրոց և բազմութեան ժողովրդոց՝ համբարձաւ զօրութ Աստուածութեանն մարմնով հանդերձ ՚ի յերկինս և անդ նստի ընդ աջմէ Հօր ։ (1

Հ. Զի՞նչ նշանակէ նստիլն Քրիստոսի ընդ աջմէ Հօր։

Պ. Առնուլ նորա ըստ մարդկութեանն զայն Աստուածային և զԱստուծոյ Հօր հաւասար իշխանութիւն և զփառս՝ զոր ՚ի յաւիտենից ունէր ըստ Աստուածութեանն՝ բայց որ ծածկեալն էր յերկրի ընդ քօղով մարդկութեան նորա ։

Հ. Զի՞նչ յոյս պարգևէ մեզ համբարձումն Քրիստոսի յերկինս ։

Պ. Որպէս Յիսուս Քրիստոս փառաւորեցաւ

(1). Եւ ինքն տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր ։ Մարկ. ժզ. 19

՚ի յերկինս ընդ մարդկութեանն. և յետ չար-
չարանաց և մահուանն համբարձաւ մարմնով
յերկինս. նոյնպէս փառաւորեսցին և ամենայն
արդարք. (1)

## ԳԼՈՒԽ. Զ.

### Յաղագս շնորհաց Աստուծոյ:

Հ. Զի՞նչ պտուղ արդեանց իւրոց եթող մեզ Քրիստոս:

Պ. Պտուղ արդեանց նորա շնորհք են՝ զոր ընկալաւ առ յԱստուծոյ վասն մեր.

Հ. Զի՞նչ է շնորհքն.

Պ. Աներևոյթ և ձրիատուր պարգև բարութեան Աստուծոյ՝ առաքեալ մեզ ՚ի փրկութիւն. (2).

Հ. Զիա՞րդ պարգևի մեզ շնորհքն Աստուածային.

Պ. Շնորհքն բղխի ՚ի Հօրէ Աստուծոյ. արդիւնաւորի մեզ յՈրդւոյ Աստուծոյ և պարգևի ՚ի ձեռն Հոգւոյն սրբոյ:

Հ. Զի՞նչ ներգործութիւն է շնորհաց.

Պ. Շնորհքն Աստուծոյ լուսաւորէ զմիտս

1 . Այլ Աստուած. . . մինչ դեռ մեռեալք էաք ՚ի մեղս մեր՝ կենդանիս արար զմեզ ՚ի Քրիստոս. ընդ նմին յարոյց և ընդ նմին նստոյց յերկնաւորս ՚ի Քրիստոս Յիսուս, Եփես, բ, 4, 5, և 6.

2 . Ամենքեան մեղան և նուազեալ են ՚ի փառացն Աստուծոյ, և արդարանան ձրի նորին շնորհօքն. Հռով. գ. 23. և 24.



մեր(1). ուղղէ զկամս մեր առ բարին, զօրա-
ցուցանէ զմեզ ՚ի գործս բարութեան. (2) և
կենագործէ զմեզ հոգևորապէս ՚ի ժառան-
գութիւն յաւիտենական երանութեան(3).

Հ. Արդեօք ամենեցո՞ւն պարգևի շնորհք Աստուծոյ թէ ոմանց և եթ.

Պ. Ամենեցուն պարգևին շնորհք. (4) բայց թողեալ է ՚ի կամս իւրաքանչիւր ուրուք ընդունել զայն կամ ոչ (5).

Հ. Զիարդ խնդրին շնորհք յԱստուծոյ.

Պ. Ջերմեռանդն աղօթիւք.

Հ. Զինչ է աղօթքն.

Պ. Աղօթքն է համբարձումն մտաց և սրտի առ Ած և խնդիր հոգեշահ բարեաց ՚ի նմանէ.

Հ. Որո՞նք են հոգեշահ բարիք՝ աղօթիւք խնդրելիք.

1 . Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ. ծագել զլոյս ՚ի վերայ այսոցիկ՝ որ նստէաք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու. Ղուկ. 77. 79.

2 . Աստուած է՝ որ յաջողէ ՚ի մեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան: Փիլիպ. բ. 13.

3 . Ապրեցոյց զմեզ ՚ի ձեռն աւազանին միւսանգամ ծը-ննդեան և նորոգութեան Հոգւոյն սրբոյ, զոր եհեղ ՚ի մեզ առատութեամբ: Տիտ. գ. 5. և 6.

4 . Գտանի խնդրողաց իւրոց. հասանի առ ցանկացողսն իւր. . . որ կանխեաց առ նա ոչ վաստակեսցի. զի դեգերեալ գտցէ զնա առ դուրս իւր: Իմաստ. զ. 13. 14. և 15.

5 . Խստապարանոցք և անթլփատք սրտիւք և ականջօք. դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք. Գործ. է. 51.

Պ. Պարունակեալքն 'ի Տէրունական աղօթսն ։

Հ. Յումմէ ուսանեցաք Տէրունական աղօթքն ։

Պ. 'Ի Փրկատորէ Յիսուսէ Տեառնէ մերմէ՝ որ ուսոյց աշակերտաց աղօթել այսպէս. Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր. որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. Այլ փրկեա զմեզ 'ի չարէ. Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն ։

Հ. 'Ի քանի՞ մասունս բաժանի աղօթքս ։

Պ. Յերիս 'ի յառաջաբանութիւն, յեօթն հայցուածս և 'ի վերջաբանութիւն ։

Հ. Ո՞րն է յառաջաբանութիւնն ։

Պ. Հայր մեր՝ որ յերկինս ես ։

Հ. Զի՞նչ են միտք յառաջաբանութեանս ։

Պ. Այսուիկ ուսուցանէ մեզ Փ.ն 'ի ցանկալն մեր յաղօթս կալ վ՟ հոգեշահ բարեաց, մատչել առ Ա.ծ ոչ ահ ընդ ահ իբրև զծառայս, այլ համարձակ յուսով իբրև զաւակք որդեգրեալք շնորհօք առ հայր որդեսէր ։



Հ. Վասն է՞ր յաւելու բառդ յերկինս ասել լինել Աստուած ։

Պ. Ոչ վասն այնորիկ, իբր թէ Աստուած գտանի յերկինս և եթ. զի նա զօրութեամբ իւրով է՛ և յերկրի և ամենայն ուրեք, այլ վասն այնորիկ՝ զի յերկինս, այսինքն ընդ հրեշտակաց և սրբոց, կայ առանձինն շնորհօք իւրովք և յայտնէ նոցա զփառս իւր ։

Հ. Ո՞րպիսի է առաջին հայցուածն և զի՞նչ զօրութիւն նորա ։

Պ. Սուրբ եղիցի անուն քո. Այսինքն՝ Աստուած մեր, առաքեա առ մեզ զօգնութիւն քո. զի բարեպաշտութ՟բ վարեսցուք զկեանս մեր՝ որով փառաւորի անուն քո. 'ի ձեռն շնորհաց քոց հեռացո զմեզ 'ի մեղաց և յարատոց՝ որովք անարգի անուն քո. դարձո զանհաւատս 'ի գիտութիւն Աստուածութեան քո և զանօրէնս 'ի ճանապարհ առաքինութեան, զի ընդ ամենայն տեղիս փառաւորեսցի անուն քո ։

Հ. Ո՞րպիսի է երկրորդ հայցուածն և զի՞նչ միտք նորին ։

Պ. Եկեսցէ արքայութիւն քո. Այս է Հայր մեր՝ բարձ 'ի մէնջ զտէրութիւն մեղաց դու ինքնին թագաւորեա 'ի հոգիս մեր շնորհօք. և յետ կարճօրեայ կենացս մերոց հաղորդս արա զմեզ բարեաց քոց 'ի քում երկնից արքայութեան ։

Հ. Ո՞րպիսի է երրորդ հայցուածն և զի՞նչ զօրութիւն նորա ։

Պ. Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. Այսինքն է զօրացո՛ զմեզ Տէր ՚ի գիտութիւն և ՚ի պահպանութիւն օրինաց քոց. շնորհեա մեզ զգաստութիւն խոնարհ կամօք յամենայնի զհետ երթալ առաջնորդութեան խնամարկութեան քո. պարգևեա մեզ այնպէս կատարել զկամս քո յերկրի, որպէս կատարեն հրեշտակք ՚ի յերկինս։

Հ. Ո՞րպիսի է չորրորդ հայցուածն և զի՞նչ իմաստ նորա.

Պ. Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. Այսինքն, Տէր մի՛ զրկեր զմեզ ՚ի հոգևոր և ՚ի մարմնաւոր կերակրոց՝. Նախ ՚ի շնորհաց քոց, ՚ի հաղորդութենէ խորհրդոց Քրիստոսի քո. և ապա յերկրաւորս բարեաց հարկաւորաց առ դարման կենաց։

Հ. Ո՞րպիսի է հինգերորդ հայցուածն և զի՞նչ մեկնութիւն նորա։

Պ. Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. Այս է՝ Տէր Աստուած մեր, ներողամիտ լեր առ մեզ՝ որք իբրև չքաւոր պարտապանս տկարանամք հատուցանել զպարտիս մեր, զպարտիս օրինազանցութեան մերոյ և ներհակութեան քոց սուրբ կամաց. քանզի օր ըստ օրէ մեղանչելով մեր՝ ոչ երբէք կարեմք ջնջել զմեղս մեր առաջի քո. այլ միայն խոստանամք ներել զրկանաց՝ զորս կրեմք ՚ի մերոց ընկերաց։



Հ. Ո՞րպիսի է վեցերորդ հայցուածն և զի՞նչ զօրութիւն նորա։

Պ. Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն. Այսինքն, ազատեա՛ զմեզ Աստուած մեր յաշխարհի աստ ՚ի վտանգից և ՚ի փորձութեանց. կամ գոնէ մի՛ առաքեր առ մեզ զփորձութիւն՝ վերագոյնս քան զկար մեր. զի անյողդողդ մնասցեն յոյս մեր առ քեզ և հաւատք։

Հ. Ո՞րպիսի է եօթներորդ հայցուածն և զի՞նչ իմաստ նորա.

Պ. Այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէն. Այս է՝ նախապահպանեա՛ զմեզ շնորհօք քովք Տէ՛ր ՚ի խորամանկութենէ չարահնար թշնամւոյն հոգւոց մերոց. հեռի՛ պահեա զմեզ ՚ի պատրողական դիպուածոց ՚ի մեղս. և անվախճան ողորմութեամբ քով զերծո՛ զմեզ ՚ի յաւիտենական տանջանաց և ՚ի մասնակցութենէ սատանայի։

Հ. Ո՞րպիսի է վերջաբանութիւն տէրունական աղօթից և զի՞նչ զօրութիւն նորա։

Պ. Զի քո՛ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն. Այսինքն՝ Տէր Աստուած մեր, մատուցաք քեզ զաղօթս մեր և յայտնեցաք առաջի քո զպէտս մեր և զկա-

րիս, և աներկմիտ յուսամք ընդունիլ առ 'ի քէն զամենայն հոգեշահ բարիս. զի դու գոլով ամենակարող, զամենայն հայցուածս մեր կարես կատարել. և գոլով ամենաբարի՝ ոչ յամեսցիս 'ի շնորհելոյ մեզ զամ բարիս:

Հ. Զի՞նչ ևս մեզ գոյ հայցելոյ զշնորհս:

Պ. Մտադիւր ունկնդրութիւն և ընթերցանութիւն Աստուածաշունչ պատգամաց. քանզի անտի մարթ է իմանալ զկամս Աստուծոյ. անդ մարթ է տեսանել զօրինակ վարուց որոց վասն զհետ երթալոյ նոցա. անդ է սրբազան Վարդապետութիւն՝ մարզիչ վարուց և սրտի: (1)

Հ. Ո՞րպիսի են նշանք շնորհաց բնակելոյ 'ի մարդում:

Պ. Պտուղք 'ի մարդում բնակեալ շնորհաց՝ առաքինութիւնք են: (2)

Հ. Զի՞նչ է առաքինութիւն.

Հ. Կատարումն օրինաց Աստուծոյ:

1 . Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութիւն են՝ 'ի յանդիմանութիւն, և յուղղութիւն և 'ի խրատ արդարութեան, զի կատարեալ լիցի մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ. բ. Տիմ. գ. 16 և 17:

2 Պտուղ Հոգւոյն այս է, սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատ, հանդարտութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն, ճնշումն: Գաղատ. ե. 22 և 23:



# ԳԼՈՒԽ Է.

Յաղագս օրինաց Աստուծոյ:

Հ. Զի՞նչ է օրէնք Աստուծոյ.

Պ. Օրէնքն Աստուծոյ է ուխտ՝ որով Աստուած ազգի մարդկան անկելոյն Ադամաւ խոստանայ զերանութիւն յաւիտենից: (1)

Հ. Զիա՞րդ բաժանի օրէնքն Աստուծոյ.

Պ. Յօրէնս հնոյ ուխտի և յԱւետարանի:

Հ. Զի՞նչ է օրէնք հնոյ ուխտի:

Պ. Բարոյական, եկեղեցական և քաղաքական կանոնք՝ որք տուան 'ի ձեռն Մովսիսի Իսրայէլեան տոհմի:

Հ. Զի՞նչ է քաղաքական օրէնք հնոյ ուխտի:

Պ. Քաղաքական օրէնք են Աստուածադիր կանոնք վասն քաղաքական և դատաստանական գործոց ժողովրդեանն Հրէից, որք տևելոց էին միայն մինչև ցգալուստ Մեսիայի: (3)

1 Պահեսջիք զամենայն հրամանս իմ և զամենայն զիրաւունս իմ, արասջիք զնոսա. զոր արարեալ մարդոյ՝ կեցցէ նոքօք: Ղևտ. ժը. 5: Շնորհօք նորա էք փրկեալք 'ի ձեռն հաւատոյ: Եփես. բ. 3:

2 . Պատուիրեաց ինձ Տէր 'ի ժամանակի յայնմիկ ուսուցանել իրաւունս ձեզ՝ և դատաստանս: բ. Օրէնք. դ. 14. Բարձցի Օծութիւն. և իրաւունք ոչ լիցին 'ի նմա և քա

Հ. Զի՞նչ նշանակեն եկեղեցական օրէնք հնոյ ուխտի.

Պ. Եկեղեցական օրէնք են Աստուածահրաման կանոնք վասն արտաքին սրբագործութեան և սրբազան արարողութեանց յեկեղեցւոջ Հրէից, (1) որք նկարագրէին զՔրիստոս (2) և ոչ կարէին տալ անդր քան զգալուստ նորա.(3)

Հ. Յի՞նչ կոչեն բարոյական օրէնք հնոյ ուխտի.

Պ. Յամենակատար հրահանգս վարուց՝ (4) որք պարաւանդեն զիւրաքանչիւր ոք յաւերժաբար. (5)

ղաքն և սրբութիւն ապականեսցին առաջնորդաւն հանդերձ որ գայցէ. Դան. Թ. 26.

1. Պատմէ զբան իւր Յակովբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի. Սաղմ. ճխէ. 8.

2. Որք են ստուերք հանդերձելոցն. այլ մարմին Քրիստոս է. Կողոս. Բ. 17.

3. Ի Քրիստոս Յիսուս՝ ոչ թլփատութիւն ինչ կարող է. Գաղատ. Ե. 6. Միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն ի մշտնջենաւորս. Եբր. Ժ. 14.

4. Օրէնք սուրբ են՝ և պատուիրանն սուրբ և արդար և բարերար. Հռովմ. Է. 12.

5. Այլ յորժամ հեթանոսք որք զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործեն. նոքա՝ որք զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք. Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց. Հռովմ. Բ. 14 և 15.



Հ. Զիա՞րդ աւանդեցան բարոյական օրէնք.

Պ. Ի տասն պատուիրանս. (1)

Հ. Զիա՞րդ բաժանին այսոքիկ տասն պատուիրանք ընդհանրապէս.

Պ. Յերկուս, յԱստուածսիրութիւն և յընկերսիրութիւն. ուստի և գծագրեալ էին յերկուս տախտակս.

Հ. Յորս ի նոցանէ Աստուածսիրութիւնն աւանդի.

Պ. Ի չորս առաջինս.

Հ. Իսկ ընկերսիրութիւնն.

Պ. Ի վեց վերջինս.

Հ. Զի՞նչ պարտ իցէ իմանալ անուամբս ընկեր.

Պ. Զամենայն մարդ.

Հ. Ի քանիս բաժանին այսոքիկ պատուիրանք ըստ զօրութեան.

Պ. Յերկուս. ՚ի յանձնառականս և ՚ի հրաժարականս. ուստի կատարումն յանձնառականին. և խոտորումն ՚ի հրաժարականէ՝ առաքինութիւն կոչի. իսկ խոտորումն ՚ի յանձնառականէ և կատարումն հրաժարականին՝ մեղք կոչի.

Հ. Ո՞ր պատուիրանն է առաջին.

Պ. Ես եմ Տէր Աստուած քո. մի՛ եղիցին

(1). Եւ էր Մովսէս առաջի Տեառն.. և գրեաց ի վերայ տախտակացն զբանս ուխտի՝ զտասն պատգամացն. Ելից. ԼԴ. 28.

քեզ այլ Աստուածք բաց յինէն ։

Հ. Զի՞նչ հրամայէ այս պատուիրան։

Պ. Ճանաչել սրտիւ և դաւանել բանիւ զմի Աստուած. զնա առաւել քան զամենայն ինչ յաշխարհի սիրել և յարգել և ՚ի նա միայն յուսալ ։

Հ. Որպիսի առաքինութիւնք սահմանին ի պատուիրանէ այդմ։

Պ. Բարեպաշտութիւն. խոնարհութիւն. յոյս ՚ մեծանձնութիւն և նմանիք սոցա ։

Հ. Զի՞նչ է բարեպաշտութիւն։

Պ. Բարեպաշտութիւն է առաքինութիւն յայտարար ներքին և արտաքին Աստուածպաշտութեան . (1)

Հ. Խոնարհութիւնն զի՞նչ է։

Պ. Է անկեղծաւոր ծանօթութիւն տկարութեան անձին և ՚ի բոլոր սրտէ խոնարհեցուցումն անձին առաջի Աստուծոյ։ (2)

Հ. Յոյսն զի՞նչ է։

Պ. Յոյս է առաքինութիւն և կատարեալ ապաւինութիւն ՚ի խնամս Աստուծոյ՝ որ զա-

1. Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն մտաց քոց ։ Մատ. իբ. 37։

2. Խոնարհեցարուք առաջի Տեառն և բարձրացուսցէ զձեզ. Յակ. դ. 10։



մենայն ինչ տնօրինէ մեզ ՚ի բարուք ։ (1) ։

Հ. Մեծանձնութիւնն զի՞նչ է։

Պ. Մեծանձնութիւնն կամ արիութիւնն է առաքինութիւն՝ որով անտրտունջ համբերեմք յառաջիկայ թշուառութեանց և խոնարհամիտ ապասեմք ապագայից ։ (2)

Հ. Որպիսի մեղք հակառակին պատուիրանիս։

Պ. Անաստուածութիւն, բազմաստուածութիւն, կեղծաւորութիւն. յանձնապաստանութիւն, յուսահատութիւն, և որք ՚ի սոցա են սակի ։

Հ. Զի՞նչ է անաստուածութիւն։

Պ. Անհաւատութիւն ՚ի գոյութիւն և ՚ի նախախնամութիւնն Աստուծոյ ։ (3)

Հ. Զի՞նչ է բազմաստուածութիւն,

Պ. Պաշտելութիւն զանազան արարածոց փոխանակ Աստուծոյ ։ (4)

Հ. Կեղծաւորութիւնն զի՞նչ է։

Պ. Նախամեծարութիւն արտաքին Աստուած-

1. Յուսով խնդացէք. Հռով. ժբ. 12։

2. Համբեր Տեառն և քաջալերեաց զօրասցի սիրտ քո և համբեր Տեառն. Սաղմ. իզ. 14։

3. Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած։ Սաղմ. ժգ. 1։

4. Զանուն Աստուծոց օտարաց մի յիշիցէք. և մի լուիցի ՚ի բերանոյ ձերմէ։ Ելից. իգ. 13։

պաշտութեան քան ներքնոյն ։ (1)

Հ. Յանձնապաստանութիւնն զի՞նչ է։

Պ. Տարապայման ապաստանութիւն ՚ի զօրութ̅ անձին, ՚ի պատիւ կամ ՚ի հարստութիւն մոռացութ̅ ամենակարողութ̅ են Աստուծոյ։(2)

Հ. Զի՞նչ է յուսահատութիւնն։

Պ. Անհամարութիւն միջոցաց՝ կարգելոց ՚ի խնդիր ողորմութեանն Աստուծոյ։(3)

Հ. Զիարդ գրի երկրորդ պատուիրանն։

Պ. Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան. որ ինչ յերկինս ՚ի վեր և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ, և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի. մի՛ երկիրպագանիցես նոցա, և մի՛ պաշտեսցես զնոսա։

Հ. Զի՞նչ արգելու այս պատուիրան։

Պ. Տալ արարածոց զԱստուածվայելուչ պա-

1. Կեղծաւորք.. ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս և սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն։ Մատ. ժե. 8։

2. Իմացարուք ամենեքեան որոց մոռացեալ իցէ զԱստուած գուցէ երբեք յափշտակիցէ. և ոչ ոք իցէ որ փրկիցէ։ Սաղմ. խթ. 22։

3. Յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք. կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք. հալածեալք՝ այլ ոչ լքեալք չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք։ Բ. Կորն. դ. 8։



տիւ և սիրել ինչ յաշխարհի իբրև զԱծ։

Հ. Որպիսի մեղաց արգելք դնին յայսմ պատուիրանի.

Պ. Կռապաշտութեան, մնապաշտութեան, շահախրութեան և որոց ՚ի սոցա են համարի։(1)

Հ. Զի՞նչ է կռապաշտութիւնն։

Պ. Աստուածացուցումն կենդանի կամ անկենդան արարածոց ինչ։(2)

Հ. Մնապաշտութիւնն զի՞նչ է.

Պ. Ընծայել իրաց ինչ կամ ժամանակաց զզօրութիւն ինչ կամ զազդեցութիւն ՚ի ներգործութիւնս մեր։(3)

Հ. Շահախրութիւնն զի՞նչ է։

Պ. Զախազանց հետամտութիւն պատուոյ և հարստութ̅ իբրև ծայրագոյն երջանկութ̅։(1)

Հ. Որպիսի առաքինութիւնք ընձիւղին ՚ի պահպանութենէ պատուիրանիս։

Պ. Փառաւորութիւն անուանն Աստուծոյ,

1. Սպանէք այսուհետև զանդամս ձեր զերկրաւորս՝ ՚ի բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, զչար, զցանկութիւն չարեաց և զագահութիւն, որ է կռապաշտութիւն։ Կողոս. գ. 5։

2. Այլ զոր զոհենն հեթանոսք՝ դիւաց, և ոչ Աստուծոյ զոհեն։ Ա. Կորն. ժ. 20։

3. Մի՛ գտանիցի ՚ի քեզ... որ դիւթիցէ զդիւթութիւն, և հմայիցէ և հաւահարց լինիցի, և կախարդիցէ կախարդանօք. և վհուկ և նշանագէտ լինիցի... քանզի պիղծ է Տեառն ամենայն՝ որ առնէ զայն։ Բ. Օրին. ժ. ը. 10. 11. և 12։

նախանձայուզութիւն օրինաց և նմանիք սոցա։

Հ. Զի՞նչ է փառաւորութիւն անուան Աստուծոյ։

Պ. Այն է՝ զի մեք՝ անուանեալքս երկրպագուք Աստուծոյ ճշմարտի, վարեսցուք զկեանս մեր բարեպաշտութեամբ ըստ սրբութեան պաշտեցելոյն առ ՚ի մենջ Աստուծոյ։ (1)

Հ. Զի՞նչ է նախանձայուզութիւն օրինաց։

Պ. Այն՝ զի գիտացեալ մեր զԱստուածպաշտութեան մերոյ զճշմարտութիւն՝ մի ուրասցուք զայն ոչ առ օգտի ինչ և ոչ առ երկիւղի թշուառութեանց։ (2)

Հ. Որպիսի բանիւք աւանդի երրորդ պատուիրանն.

Պ. Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քոյ ՚ի վերայ սնոտեաց։

Հ. Զի՞նչ արգելու այդ պատուիրան։

Պ. Զհեգնանելն զանուն Աստուծոյ վայրապար ՚ի սուտ խոստմունս և յընդունայն երդմունս։

Հ. Որպիսի մեղք արգելեալք լինին սովաւ.

Պ. Հայհոյութիւն, ստերդմնութիւն և որք սոցա են նմանք։

Հ. Զի՞նչ է հայհոյութիւն։

(1). Ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի։ Մատ. 2. 24.
(2). Սուրբ եղիցի անուն քո. Մատթ. Զ. 9. Այլ ըստ սրբոյն որ կոչեաց զձեզ և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք. ա. Պետ. ա. 15։
(3). Յամենայնի ճգնեաց. զգործս աւետարանչի գործեա, զպաշտօն քո կատարեալ կալ. բ. Տիմ. դ. 5։



Պ. Ի բան նախատանաց ասացեալ ընդդէմ Աստուծոյ, հեգնութիւն հաւատոյ՝ եկեղեցւոյ՝ և կամ այլոյ ինչ սրբութեան։ (1)

Հ. Ստերդմնութիւնն զի՞նչ է.

Պ. Անկատարութիւն բարի խոստմանց՝ հաստատելոց երդմամբ։ (2)

Հ. Որպիսի առաքինութիւնք շառաւիղել կարեն ՚ի պատուիրանիս պահպանութենէ.

Պ. Երկիւղ Աստուծոյ, սանձահարումն լեզուի, և նմանք սոցա։

Հ. Զի՞նչ է երկիւղ Աստուծոյ.

Պ. Զմտաւածումն մեծութեան Աստուծոյ (3) և սրտի մօք խոստովանումն սրբութեան նորա։ (4)

Հ. Զի՞նչ է սանձահարութիւն լեզուի.

Պ. Զգուշութիւն ՚ի խօսելոյ զանպատեհս (5) ընդդէմ Աստուծոյ, հաւատոյ, եկեղեցւոյ և ամենայն սրբութեան։ (6)

(1). Այլ սոքա իբրև զանխօս անասունս... զորոց չենն տեղեակ հայհոյեն յապականութեան իւրեանց. բ. Պետ. բ. 12։
(2). Մի երդնուցուք ստութեամբ յանուն իմ. Ղևտ. ԺԹ. 12։
(3). Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն. Առակ. Ա. 7։
(4). Ծառայեցէք Տեառն երկիւղիւ, ցնծացէք առաջի նորա դողութեամբ. Սաղմ. Բ. 11։
(5). Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ կատարեալ, որ կարող է սանձահարել զամենայն մարմին իւր. Յակ. Գ. 2։
(6). Որ պահէ զբերան իւր՝ զանձն իւր սիրէ. Առակ. ԺԳ. 3։

Հ. Զի՞նչ դէր հորդորէ պատուիրանն:

Պ. Յիշեսջի՛ր զօրն շաբաթուց սրբել զնա. զվեց օր գործեսցե՛ս և արասցես զամենայն գործս քո. յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քում :

Հ. Զի՞նչ հրամայէ Աստուած յայսմ պատուիրանի.

Պ. Ի սոսա Քրիստոնեայս՝ իբրև ՚ի ժամանակս նուիրեալս Աստուծոյ, թողուլ զամենայն ծառայական գործառնութիւնս և զշահավաճառութիւնս դիմել ՚ի տաճար Աստուծոյ վասն աղօթից և ունկնդրութեան բանին Աստուծոյ. և մեծապէս փութալ սրբել զայնոսիկ աւուրս գործովք բարեաց՝ աղօթիւք և ժուժկալութեամբ :

Հ. Զորպիսի առաքինութիւնս պահանջէ այս պատուիրան:

Պ. Զջերմեռանդութիւն, զողորմութիւն և զնմանիս սոցա :

Հ. Զի՞նչ է ջերմեռանդութիւն.

Պ. Ճիշդ պահպանութիւն ամենայն սրբազան արարողութեանց եկեղեցւոյ. (1)

(1). Աղաչեմ զձեզ եղբարք գթութեամբն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ զբանաւոր պաշտօնն ձեր. Հռովմ. ԺԲ. 1.



Հ. Ողորմութիւնն զի՞նչ է.

Պ. Օգնականութիւն և կարեկցութիւն ընկերին վասն սիրոյն Աստուծոյ. (1)

Հ. Յո՞րպիսի մեղս գլորին անհնազանդք պատուիրանիս:

Պ. Յամբարշտութի՛ւն, ՚ի ծուլութիւն, յանդգնութիւն և յայլ այսպիսիս.

Հ. Զի՞նչ է ամբարշտութիւն.

Պ. Յայտնի հակառակութիւն օրինաց և հաւատոց արհամարհութեամբ հանդերձ եկեղեցական արարողութեանց. (2)

Հ. Ծուլութիւնն զի՞նչ է.

Պ. Զանցառութիւն զպարտաւորութեամբք իւրովք առ Աստուած, առ ընկերն, և առ անձն իւր. (3)

Հ. Ընդունայնութիւնն զի՞նչ է.

(1). Փոխ տայ Աստուծոյ. որ ողորմի աղքատին. ըստ տուրս նորա հատուսցէ նմա. Առակ. ԺԹ. 17.

(2). Որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար. և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ որով և սրբեցաւ. և զՀոգին շնորհաց թշնամանեաց. Եբր. Ժ. 29.

(3). Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. Տէր... երկեայ. գնացի և թաքուցի զքանքարն քո յերկրի... պատասխանի ետ Տէրն և ասէ ցնա. Ծառայ չար և ծոյլ. Մատթ. ԻԵ. 24. 25. և 26.

Պ. Բազմազբաղ պատաղումն 'ի հոգս աշխարհի մինչև ոչ կարել կատարել զօրինադրեալ պաշտօն Աստուծոյ։ (1)

Հ. Որպէս զի՞ հինգերորդ պատուիրանն,

Պ. Պատուեա՛ զհայր քո և զմայր քո. զի քեզ բարի լինիցի և զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի.

Հ. Զի՞նչ հրամայէ Աստուած այդմ պատուիրանաւ.

Պ. Սրտի մտօք սիրել և միշտ ներքուստ և արտաքուստ պատուել զծնողս մեր. և անուամբս ծնողք՝ պատուիրէ հնազանդել և յարգել զորս հոգւոյն վասն բարութեան վիճակի մերոյ, այս է զԹագաւորս, (2) զհովիւս եկեղեցւոյ, (3) զքաղաքական իշխանս, (4) զբարերարս և զծերունիս։ (5)

Հ. Որպիսի՞ առաքինութիւնք վերընծիւղին 'ի պատուիրանիս

(1). Դու հոգաս և զբաղում իմիք զբաղեալ ես. բայց աստ սակաւ ինչ պիտոյ է։ Ղուկ. Ժ. 41. և 42.
(2). Աստուծոյ երկերուք. զԹագաւորն պատուեցէք. Ա. Պետ. Բ. 17.
(3). Անկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց։ Եբր. ԺԳ. 17.
(4). Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն անեղծուածոյ վասն Տեառն։ Ա. Պետ. 13.
(5). Առաջի ալեաց յառնիցես և պատուեսցես զերեսս ծերոյն։ Ղևտ. ԺԹ. 32.



պահպանութենէ.

Պ. Հնազանդութիւն, երախտագիտութիւն և որ 'ի սոցա սակի են.

Հ. Զի՞նչ է հնազանդութիւն.

Պ. Կամակար սրտիւ հպատակութիւն հրամանաց իշխանութեանց և պետութեանց։ (1).

Հ. Երախտագիտութիւնն զի՞նչ է.

Պ. Շնորհապարտութիւն և յարգութիւն ցուցեալ ում և իցէ վասն բարերարելոյն մեզ։ (2).

Հ. Որպիսի՞ մեղք ծնանին 'ի զանցառութենէ պատուիրանաւս.

Պ. Անհնազանդութիւն, ապերախտութիւն և նմանիք սոցա.

Հ. Զի՞նչ է անհնազանդութիւն.

Պ. Ինքնակամ արհամարհութիւն բարի խրատուց կամ հրամանաց. (3).

Հ. Ապերախտութիւնն զի՞նչ է.

Պ. Խստասիրտ անզգայութիւն ընկալեալ բարե-

(1). Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է. 'ի հնազանդութեան կացցէ։ Հռովմ. ԺԳ. 1.
(2). Աղաչեմ զձեզ եղբարք ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր 'ի Տէր։ Ա. Թեսաղ. Ե. 12.
(3). Որդի որ Թողուցու պահել զխրատ հօր, խորհի բղձանս չարեաց։ Առակ. ԺԹ. 27.

բարութեանց կամ մոռացուն երախտեաց։ (1)

Հ. Որպիսի բանիւք տայլի գնի վեցերորդ պատուիրանն՝

Պ. Մի՛ սպանաներ։

Հ. Զի՞նչ արգելու Աստուած ՚ի դմին պատուիրանի։

Պ. Արգելու ոչ միայն զխարդ և կցել սպանանել զմարդ. այլ և զմտաւ անգամ ածել զայնմանէ. ցանկալ մահուան ուրուք. տալ ումեք նպաստ ինչ կամ խորհուրդ սպանութեան. նեղել և զրկել զընկերն. կամ ձեռնհաս լինել և կարող օգնել ընկերին և չօգնել։ (2)

Հ. Որպիսի մեղք արգելեալ լինին այսուիկ պատուիրանաւ.

Պ. Սպանութիւն, անձնասպանութիւն. խստասրտութիւն, վրէժխնդրութիւն. և որք ՚ի սոցա համարի են։

Հ. Զի՞նչ է սպանութիւն.

Պ. Բառնի բարձումն կամ կարճումն կենաց ընկերին։ (3)

(1). Ցույս անշնորհակալին իբրև զսառն ձմերայնոյ. հալեսցի. Իմաստ. ժզ. 29.

(2). Ամենայն որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է. ա. Յովհ. գ. 1.

(3). Մի սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի ատենանի։ Մատ. ե. 21.



Հ. Անձնասպանութիւնն զի՞նչ է.

Պ. Ինքնակամ բարձումն կամ կարճումն կենաց անձին։ (1)

Հ. Խստասրտութիւնն զի՞նչ է.

Պ. Անգթութիւն կարեաց ընկերին։ (2)

Հ. Վրէժխնդրութիւնն զի՞նչ է.

Պ. Ցանկութիւն հատուցանելոյ ընկերին չար փոխանակ չարի։ (3)

Հ. Զո՞րպիսի առաքինութիւնս ուսուցանէ սոյն պատուիրանս.

Պ. Զանյիշաչարութիւն, զկարեկցութիւն և զնմանիս սոցա։

Հ. Զի՞նչ է անյիշաչարութիւն։

Պ. Սանձահարութիւն ցասմնական շարժութեանց սրտի և ըղձի վրէժխնդրութեան յաղագս յայլոց կրեալ զրկանաց։ (4)

(1). Զի ոչ ոք երբէք ատեաց զանձն իւր։ Եփես. ե. 29.

(2). Ցայնժամ ասասցէ և ցայնոսիկ՝ որք ընդ ահեկէն իցեն. Երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական... զի քաղցեայ և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցայ և ոչ արբուցէք զիս. օտար էի և ոչ ժողովեցէք զիս. մերկ էի. և ոչ զգեցուցէք զիս. հիւանդ էի և ՚ի բանտի և ոչ տեսէք զիս։ Մատ. իե. 41. 42. և 43.

(3). Մի ասիցես թէ արից զվրէժ ՚ի թշնամւոյն. այլ համբեր Տեառն. զի քեզ օգնական լիցի։ Առակ. ի. 22.

(4). Մի յաղթիր ՚ի չարէն. այլ յաղթեա բարեաւն չարին։ Հռով. ժբ. 21.

Հ. Կարեկցութիւնն զի՞նչ է։

Պ. Ացորդութիւն կարեաց և տառապանաց ընկերի։ (1)

Հ. Ո՞ր պատուիրան է եօթներորդ։

Պ. Մի՛ շնար։

Հ. Զի՞նչ արգելու Աստուած ի պատուիրանիս։

Պ. Արգելու անձնատուր լինել յամօթալի կիրս. ի դատարկանեցութիւն, ի զեղխութիւն. ի մեղկութիւն և յանխոհեմաբար հետևումն գայթակղեցուցիչ օրինակաց։ (2)

Հ. Որպիսի մեղք արգիլեալ լինին յայսմ պատուիրանի։

Պ. Մարմնամոլութիւն. որ կուսութեան և այլ այսպիսիք։

Հ. Զի՞նչ է մարմնամոլութիւն։

Պ. Զանկանալ ի վեր հեշտախտութեան այնպէս, մինչև փոխանակ արմատախիլ առնելոյ զայն՝ և ևս զգրգռել։ (3)

Հ. Որկորոտութիւնն զի՞նչ է։

Պ. Զանխտաղանց կերակրութիւն կերակրոց և

(1) Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և արասջիք և դուք նոցա. Ղուկ. Զ. 31.

(2) Սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ. Բ. Կոր. Է. 1.

(3) Զի եթէ ըստ մարմնոյ կեցջիք՝ մեռանելոց էք. Հռովմ. Ը. 13.



ըմպելեաց. և անձնարձակ թոյլտուութիւն վատթար հակամիտութեանց։ (1)

Հ. Որպիսի առաքինութիւնք ստեղծին ի պատուիրանիս պահպանութենէ։

Պ. Սրբութիւն, ժուժկալութիւն և այլ այսպիսիք։

Հ. Զի՞նչ է սրբութիւն։

Պ. Պահպանութիւն անարատութեան սրտի և անապականութեան մարմնոյ։ (2)

Հ. Ժուժկալութիւնն զի՞նչ է։

Պ. Անձնարկութիւն վատթար հակամիտութեանց և պահեցողութիւն յաւելորդութենէ ի կերակուրս և յըմպելիս։ (3)

Հ. Զիա՞րդ գրի ութերորդ պատուիրանն։

Պ. Մի՛ գողանար։

Հ. Զի՞նչ արգելու Աստուած սովին պատուիրանաւ։

Պ. Արգելու սեփհականել զինչ և իցէ զօտարին յայտնի կամ ի ծածուկ, բռնի կամ խորամանկութեամբ. առնուլ զվարձ աշխատութեան ի վեր քան զարժանն, կամ վաճա-

(1) Զգոյշ լերուք անձանց. գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ և հոգւովք աշխարհականօք։ Ղուկ. ԻԱ. 34.

(2) Իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք կեցջիք. Հռովմ. Ը. 13.

(3) Զգաստացարուք այսուհետև և լերուք զուարթունք. Ա. Պետ. Դ. 7.

ուել զգին՝ աւելի քան զվարձն, զգուշալ իւր
եւ բացուցանել. ոչ յետս տալ զոր ինչ յա-
նձն առեալ. (1)

Հ. Որպիսի մեղաց արգելք դնին ՚ի սմին պատուիրանի:

Պ. Յափշտակութեան, զօշաքաղութեան եւ ա-
յլոց ՚ի սոցա սակի են.

Հ. Զի՞նչ է յափշտակութիւնն:

Պ. Շորթումն իրաց ընկերին եթէ բռնի եւ
եթէ խորամանկութեամբ. (2)

Հ. Զօշաքաղութիւնն զի՞նչ է.

Պ. Անյագ ցանկութի՛ւն ժողովելոյ զինչս անձնայն
եւս եւ ապօրինաւոր հնարիւք. (3)

Հ. Որպիսի առաքինութեանց պատճառ լինի պատուի-
րանիդ պահպանութիւն.

Պ. Ողորմութեան, անշահասիրութեան եւ
նմանեաց սոցա.

Հ. Զի՞նչ է չափաւորութիւն.

Պ. Շատանալ իւրովք սեպհական ստացուա-

(1) Փոխ առնու մեղաւորն եւ ոչ հատուցանէ. Սաղմ. ԼԶ. 21.
(2) Մի՛ զանցանել, եւ զրկել յիրիք յաղագս զեղբայր
իւր, քանզի վրէժխնդիր է Տէր ՚ի վերայ ամենայնի այդո-
րիկ, Ա. Թես. Դ. 6.
(3) Արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է. որում
ոմանք ցանկացեալ՝ մոլորեցան ՚ի հաւատոց: Ա. Տիմ. Զ. 10.



ծովք թէ եւ սակաւք իցեն՝ առանց ջանալոյ
յափշտակել զինչս յօտարէ. (1)

Հ. Անշահասիրութիւնն զի՞նչ է.

Պ. Անձնապահ լինել յամենայն իրաց օտարին
եւս եւ ՚ի կարելն տիրել նոցա. (2)

Հ. Զի՞արդ գրի իններորդ պատուիրանն.

Պ. Մի՛ սուտ վկայութի՛ վկայեր զընկերէ քումմէ.

Հ. Զի՞նչ արգելու աստուած յայսմ պատուիրանի.

Պ. Արգելու վկայել սուտութեամբ ՚ի վնաս
ընկերին, դնել զմեղս իւր յայլոյ վերայ. զըր-
պարտել զանպարտն եւ բամբասելով հրապարա-
կել զյանցանս այլոց.

Հ. Որպիսի մեղք արգելեալ լինին պատուիրանաւս.

Պ. Ներհակութիւն, չարախօսութիւն, հը-
պարտութիւն եւ որք զայսր կնի կարգին.

Հ. Զի՞նչ է անկեղծութիւն.

Պ. Պարզամտութիւն ճշմարտութեան ՚ի գործս
եւ ՚ի բանս. (3)

(1) Շատ լիցին ձեզ թոշակքն ձեր. Ղուկ. Գ. 14.
(2) Զգրաւ պարտապանին ՚ի բաց տացէ. եւ զյափշտա-
կութիւն դարձուցանիցէ. կենօք կեցցէ. Եզեկ. Գ. 15.
(3) Որ սիրէ զմեղս (զանիրաւութիւն) ատեայ զանձն իւր.
Սաղմ. Ժ. 6.

Հ. Զարթօնութիւնն զի՞նչ է։
Պ. Տարապարտ բամբասանք զընկերէ և հրատարակութիւն մոլորութեանց նորա։(1)
Հ. Հպարտութիւնն զի՞նչ է։
Պ. Յանիրաւի սեպհականումն պատուոյ անձին, հանդերձ արհամարհութեամբ ընկերին։(2)
Հ. Որպիսի առաքինութիւնք շաւիղին ՚ի պատուիրանիդ պահպանութենէ։
Պ. Արդարութիւն, քաղցրութիւն, հեզութիւն և այլ այսպիսիք։
Հ. Զի՞նչ է արդարութիւնն։
Պ. Պահպանութիւն իրաւանց ՚ի բանս և ՚ի գործս։(3)
Հ. Քաղցրութիւնն զի՞նչ է։
Պ. Ախորժութիւն լսելոյ զվատթար լուր զընկերէն և մի՛շտ բարիս խօսելոյ զայլոց։(4)
Հ. Հեզութիւնն զի՞նչ է։

(1). Մի բամբասէք զմիմեանս եղբարք. Յակ. Դ. 11.
(2). Պարծիք յամբարտաւանութեան ձերում. ամենայն այսպիսիք պարծանք չարութեան են. Յակ. Դ. 16.
(3). Ընկեցէք զչարիս յանձանց ձերոց. խնդրեցէք զիրաւունս, փրկեցէք զզրկեալն, դատ արարէք որբոյն, և տուք իրաւունս այրւոյն. Եսայ. Ա. 16. 17.
(4). Մի զոք հայհոյել, անկռիւս լինել, հեզս. զամենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել. Տիտ. Գ. 2.



Պ. Անյիշաչար բանաւորի ոգւոյ և յօժարութեամբ ներելոյ յանցանաց և ակարութեան ընկերի։(1)
Հ. Զի՞արդ գրի տասներորդ պատուիրանն։
Պ. Մի՛ ցանկանար տան ընկերի քոյ, և մի՛ անդոյ նորա. մի՛ ցանկանար կնոջ ընկերի քոյ. և մի՛ ծառայի նորա. և մի՛ աղախնոյ նորա. և մի՛ եզին նորա. և մի՛ իշոյ նորա. և մի՛ ամենայն անասնոյ նորա. և մի՛ ամենայնի՝ զինչ ընկերի քոյ իցէ։
Հ. Զի՞նչ արգելու Աստուած յայսմ պատուիրանի։
Պ. Զամենայն չար ցանկութիւնս սրտի և զամենայն ստգիւտ հակամիտութիւնս կամաց. և հրամայէ ոչ միայն չառնել զրկանս ինչ ընկերին. այլ և ոչ իսկ խորհիլ. ոչ միայն չսեփականել ինքեան զօտարին այլ և չցանկալ սեփականելոյ։
Հ. Որպիսի մեղք արգելեալ լինին պատուիրանաւս։
Պ. Ինքնասիրութիւն, անհոգութիւն և նմանիք սոցա։
Հ. Զի՞նչ է ինքնասիրութիւն։
Պ. Ունակութիւն թողլ տալոյ ինքեան և հաւանելոյ ընդ պատշաճութիւն զեղծ կամաց իւրոց։(2)

(1). Ներել միմեանց. շնորհել իւրեարց, եթէ ուրուք զումէք տրտունջ ինչ իցէ. Կողոս. Գ. 13.
(2). Մի այսուհետեւ թագաւորեսցեն մեղք ՚ի մահկանացու մարմինս ձեր՝ հնազանդել ցանկութեանց նորա. Հռովմ. Զ. 12.

Հ. Անհզգութիւնն զի՞նչ է.

Պ. Անփոյթութիւն զուգութենէ մարմնական հաճոյութեանց և զանձնէ առնելոյ զա-նօրէն ցանկութիւն։(1)

Հ. Զո՞րպիսի առաքինութիւնս հրամայէ պատուիրանաւ ունել.

Պ. Զարթնութիւն, զանձնուրացութիւն. և այլն.

Հ. Զի՞նչ է արթնութիւնն.

Պ. Անդադար մտադրութիւն գործոց իւրոց և յօժարութեանց, առ ՚ի գիտել թէ իցեն նոքա ըստ Աստուածահրաման օրինաց։(2)

Հ. Զի՞նչ է անձնուրացութիւն.

Պ. Ջանք արմատաքի խլելոյ զընդդարձոյս վա-թար ցանկութիւնս մեր։(3)

Հ. Մեղք ՚ի քանիս բաժանին.

Պ. Յերկուս. ՚ի ներելիս և ՚ի մահացուս.(4)

Հ. Որք են ներելիքն.

Պ. Այնքիկ յորժամ ըստ տկարութեան,

(1). Մի զգենուլ անկանիցիմք որպէս և այլքն. այլ արթունք և զուարթունք եղիցուք։ ա. Թես. ե. 6.
(2). Տեսջիք որպէս ճշմարտիւ գնասջիք. մի իբրև անիմաստք այլ իմաստունք. զինչ կամք են Տեառն. Եփես. ե. 15. 17.
(3). Որք Քրիստոսեանքն են. զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօք և ցանկութեամբք հանդերձ. Գաղ. ե. 24.
(4). Է մեղք՝ որք մահացուչափք են և են մեղք՝ որ ոչ առ ՚ի մահ. ա. Յովհ. ե. 17. 16.



ըստ տարակուսութ՟, կամ անմտաբար յան-կարծահաս դիպուածով իւիք զանց զօրինօք առնեմք։(1)

Հ. Մահացուքն ո՞ք են.

Պ. Այնքիկ յորժամ տիրապէս տեղեակք գոլով օրինաց, ոչ մտօ եղեալ յանդիմա-նութեան խղճի մտաց՝ կամաւոր յօժարութ՟ գործեմք զչարիս։(2)

Հ. Զի՞նչ է ուխտն Աւետարանական.

Պ. Շնորհաձիր խոստումն Աստուծոյ վասն հաստատոյն ՚ի Քրիստոս Յիսուս՝ փրկութ՟,(3) որդեգրութեան,(*) և ժառանգութ՟ կենա-ցըն յաւիտենից։(5)

Հ. Զի՞նչ զանազանութիւն է ՚ի մէջ օրինական և Աւետարանական ուխտի.

Պ. Այն՝ զի ուխտն օրինաց պահանջէ զկա-

(1). Ծառայն որ ոչ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ. Ղուկ. ժբ. 47. 48.
(2). Եւ ծառայն՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա արբցէ գան բազում։ Անդ. ժբ. 47.
(3). Աւետարանն Քրիստոսի զօրութիւնն Աստուծոյ է ՚ի փրկութիւն ամենայն հաւատացելոց. Հռովմ. ա. 16.
(4). Որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա. Յովհ. ա. 1. 12
(5). Զկեանս յաւիտենականս ետ մեզ Աստուած. և այս, են կեանքն, որ յՈրդին նորա են... զի հաւատասջիք յանուն Որդւոյն Աստուծոյ. ա. Յովհ. 11. 13.

տուրումն պատուիրանաց անձերի(1) եւ աւետարանական պահանջէ զհաւատս 'ի Յիսուս Քրիստոս Փրկիչ մեր, զմեզ արեամբ իւրով յաւիտենական մեղաց սրբեաց(2)

Հ. Հնարիցէ ակն ունել փրկութեան զհետ երթեալ միայն յայտանէ.

Պ. Ոչ. այլ հարկէ երկրպագանչօրոցն երթալ զհետ.

Հ. Վասն էր անհնարին է ակնունել փրկութեան զհետ երթեալ միայն օրինացն ուխտի.

Պ. Վասնզի թէպէտ խոստացաւ Աստուած կատարողաց զօրէնս իւր զկեանս յաւիտենականս. (3) այլ որովհետեւ ոչ ոք 'ի մարդկանէ անձերի զօրէնսն կատարել կարէ. (4) վասն որոյ եւ զանցաւորքն եւ մնասամբ ինչ օրինաց (5)

(1). Անիծեալ ամենայն մարդ՝ որ ոչ կայցէ յամենայն բանս օրինացս այսոցիկ առնել զսոսա. բ. Օրէնք իէ. 26.
(2). Եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Հայր Աստուած Յիսուս Քրիստոս՝ զարդար, եւ զնա քաւիչ. եւ նա է քաւութիւն մեղաց մերոց. ա. Յովհ. բ. 1. եւ 2.
(3). Ես եմ Տէր Աստուած ձեր. եւ պահեսջիք զամենայն հրամանս իմ եւ զամենայն դատաստանս իմ. արասջիք զնոսա. զի որ արասցէ, կեցցէ նոքօք. Ղեւտ. ժը. 5.
(4). Ի գործոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին առաջի նորա (Աստուծոյ). Հռովմ. գ. 20.
(5). Որ ոք զամենայն օրէնսն պահեսցէ, եւ մի ինչ վրիպեսցի, եղեւ ամենայն օրինացն պարտական. Յակ. բ. 10.



պարտաւորին Տեառն մերոյ 'ի հնազանդ անիծից մեղաց եւ յաւիտենից մահուան. (1)

Հ. Ընդէր անմիտ է փրկութեան ակն ունել զհետ երթեալ միայն Աւետարանական ուխտի.

Պ. Վասնզի նոյն ինքն իսկ ուխտն աւետարանաց կամ զպատուիրանաց ապաշխարանաց պահանջէ. (2).

Հ. Ո՞ւմ ինչ օգուտ իցէ մեզ ունել յուսալ Աւետարանական.

Պ. Այն զի 'ի կատարել մեր զպատուիրանս, Այն ըստ կարի՝ թէ եւ ոչ անձերի, հաւատքն յարդարեն Յիսուսի Քրիստոսի ծածկէ զպակասութիւն պատուիրանապահութեան մերոյ. (3) եւ արդարացուցանէ զմեզ առաջի Աստուծոյ 'ի փրկութիւն. (4)

Հ. Ըստ այսմ ամենայն հաւատացեալ ընդունի՞ զփրկութիւն:

Պ. Ամենայն ոք՝ որ ունի զհաւատ ճշմարիտ կամ կենդանի՝ եւ ոչ զսուտ կամ զմեռեալ:

(1) Եւ զոր ինչ պատուիրանն որ 'ի կեանսն էր. նոյն 'ի մահ հասաւ. Հռովմ. է. 10.
(2) Եթէ ասիցէ ոք հաւատս ունիլ, եւ գործս ոչ ունիցի, միթէ կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցանել զնա. Յակ. բ. 14.
3. Ահա է Տէր քո, եղիցի անիրաւութեանց նոցա, եւ զմեղաց նոցա եւ զանօրէնութեանց նոցա ոչ եւս յիշեցից. Եբր. ը. 12.
4. Որ ոչն գիտէր զմեղս վասն մեր մեղս արար. զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ. բ. Կոր. ե. 21.

Հ. Ո՞րինչ է հաւատն կենդանի.

Պ. Այն է՝ յորժամ մարդն սրտի մտօք հաւատացեալ յԱւետարանին ճշմարտութիւն, և ըստ կարի զօրէնս կատարեալ, յուսայ ընդունել զքաւութիւն մեղաց իւրոց յԱծ յանուն Քրիստոսի։ (1)

Հ. Վասն է՞ր կենդանի կոչի այսպիսի հաւատ։

Պ. Նախ՝ զի արդեամբքն Քրիստոսի արդարացուցեալ զմարդն առաջի Աստուծոյ, կենդանացուցանէ զնա ՚ի մեռելութենէ մեղաց. (2) երկրորդ՝ զի մնայ ՚ի մարդում, ոչ առանց ներգործութեան, այլ պտղաբերէ զառաքինութիւնս։ (3)

Հ. Ո՞րինչ նշանակէ սուտ կամ մեռեալն հաւատ։

Պ. Ճանաչել և խոստովանել զԱւետարանա-

(1). Եւ եթէ Հայր կոչիցէք զայն, որ առանց ակնառութեան դատէ ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղիւ զձերոյ պանդխտութեան ժամանակս գնասջիք... զի փրկեցայք պատուական արեամբն Քրիստոսի.. որք նովաւ հաւատացիք յԱստուած. զի հաւատքն ձեր և յոյս իցեն յԱստուած. Ա. Պետ. Ա. 17. 18. 19. և 21.

(2). Աստուած որ մեծն է ողորմութեամբ. զմեզ մինչդեռ մեռեալք էաք ի մեղս մեր, կենդանիս արար ի Քրիստոս. Եփես. Բ. 4 և 5.

(3). Հաւատքն եղեն գործակիցք գործոց նորա և ՚ի գործոց անտի հաւատքն կատարեցան. Յակ. Բ. 22.



կան ճշմարտութիւնս և ոչ ըստ այնոցիկ վարիլ. (1)

Հ. Ի՞ր վասն մեռեալ կոչի այսպիսի հաւատ.

Պ. Վասն այնորիկ՝ զի ոչ գործակցեալ մարդոյն ՚ի հանդիսի առաքինութեան, ոչ առաջնորդէ նմա առ կեանս յաւիտենից։ (2)

Հ. Որպիսի հաւատ պահանջի ՚ի Քրիստոնէէ.

Պ. Ճշմարիտ և կենդանի. զի դաւանութբ հաւատոց և պատուիրանացն պահպանութբ ու-ղղապէս կատարեսցին օրէնք Աստուծոյ. (3

## ԳԼՈՒԽ. Ը.

Յաղագս եկեղեցւոյ Աստուծոյ.

Հ. Ո՞ւմ աւանդեաց Աստուած զուխտն Աւետարանական։

Պ. Եկեղեցւոյ. (4)

(1). Դու հաւատաս՝ զի մի է Աստուած. բարւոք առնես և դևք հաւատան և սարսին. Յակ. Բ. 19.

(2). Տեսանէք, զի ՚ի գործոց արդարանայ մարդ և ոչ ՚ի հաւատոց միայն... զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են. Յակ. Բ. 24. և 26.

(3) Իսկ որ յառեալ ՚ի կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի, և ՚ի նմին կացցէ՝ ոչ եղև նա լսող մոռացութեան՝ այլ առնող գործոյն. նա յառնելն իւրում լիցի երանելի։ Յակ. Ա. 25.

(4), Այս է ուխտն՝ զոր ուխտեցից տանն Իսրայէլի յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ Տէր. տաց զօրէնս իմ ՚ի միտս նոցա, և ՚ի սիրտս նոցա գրեցից զնոսա. Երեմ. ԼԱ. 33.

Հ. Օ՞րն է եկեղեցին.

Պ. Ժողովն ճշմարիտ հաւատացելոց ՚ի Ք͞ս.

Հ. Գործեալ զի՞նչ կոչի եկեղեցին յաստուածաշունչ գիրս.

Պ. Երբեմն անուանի խորհրդական մարմին որոյ գլուխ Քրիստոս է. (1) երբեմն հօտ (2) որոյ հովիւ Ք͞ս է. (3) երբեմն տաճար հոգւոյ՝ (4) որոյ հիմն Քրիստոս է։ (.)

Հ. Ո՞րն գրի ՚ի հանգանակս եկեղեցւոյ.

Պ. Իններորդ անդամ. Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և Առաքելական եկեղեցի։

Հ. Ո՞րն նշանակէ հաւատալ յեկեղեցի.

Պ. Նշանակէ ոչ միայն զԱստուածային վարդապետութիւնս որ բացերեւելի մեզ առաջի դնին յԱստուածադիր տառն, այլ և զոր ինչ միանգամ Առաքելական անգիր աւանդութեամբ՝ և յուղղորդ նոցա սուրբ Հարց և Սրբազան եկեղեցւոյ սահմանեցին ՚ի ժողովս խոստովանել աներկեան ճշմարտութիւն և կատարել ջերմեռանդութեամբ։

(1)․ Նա (այսինքն Քրիստոս) է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ։ Կողոս. ա. 18.
(2)․ Ոչխարք իմ ձայնի իմում լսեն. Յովհ. ժ. 27.
(3)․ Ես եմ հովիւն քաջ. Յովհ. ժ. 11.
(4)․ Ոչ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ. ա. Կորն. գ. 16.
(5)․ Զհիմն այլ ոք ո՛չ կարէ դնել քան զեդեալն՝ որ է Յիսուս Քրիստոս. ա. Կորն. գ. 11.



Հ. Ասի՞, մի միայն սոյն եկեղեցին.

Պ. Ըստ միութեան հաւատոյ՝ զի հարկ է եկեղեցւոյն համաձայն լինել ՚ի դաւանութեան նորա. (1) ըստ միութեան յուսոյ՝ որոյ առարկայն քան ամենայն հաւատացելոց պարտի լինել փրկութիւնն միայն (2) ըստ միութեան սիրոյ՝ որով հարկէ ամենայն հաւատացելոց յօդիլ ՚ի մի. (3) ըստ միութեան հոգւոյ համօրէն հաւատացելոց ընդ Տեառն. (4) և ըստ միութեան գլխոյ նորին Քրիստոսի։ (5)

(1)․ Մի Տէր. մի հաւատ. Եփես. դ. 5.
(2)․ Որպէս և կոչեցայք ՚ի մի յոյս կոչման ձերոյ. Եփես. դ. 4.
(3)․ Ընդ միմեանց սիրով. փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան։ Եփես. դ. և 2 3.
(4)․ Իսկ որ միաբանի ՚ի Տէր՝ մի հոգի է։ ա. Կորն. զ 17.
(5)․ Եւ զամենայն ինչ հնազանդ արար (Աստուած) ՚ի ներքոյ ոտից նորա (Քրիստոսի) և զնա ետ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ. որ է մարմին նորա։ Եփես. ա. 22. և 23.

Հ. Ընդէ՞ր սուրբ կոչի եկեղեցին։
Պ. Զանզի Քրիստոս արեամբ իւրով հեղլով ՚ի խաչին՝ սրբեաց զամենայն ճշմարիտ հաւատացեալս յամ մեղաց աղտեղութենէ։(1)
Հ. Ի՞ր վասն ընդհանրական անուանի։
Պ. Ընդհանրական և կաթուղիկէ անուանի զի ոչ ՚ի տեղւոջ ինչ ուրեք ամփոփի, այլ փառաւոր հանդիսանայ ընդ ոլորտս տիեզերաց։(2)
Հ. Վասն է՞ր Առաքելական ասի։
Պ. Վասն յամենայնի զհետ երթալոյ Առաքելական վարդապետութեան, և միշտ անփոփոխ ունելոյ զայն։(3)
Հ. Վասն է՞ր զեկեղեցի մեր ուղղափառ լինել հաւատամք.
Պ. Վասն անստերիւր զհետ երթալոյ նորա վարդապետութեան Աստուածաշունչ պատգամաց, աւանդութեանց Առաքելոց, և կանոնաց տիեզերական ժողովոց։
Հ. Զի՞նչ է բարեկարգութիւն եկեղեցւոյ.
Պ. Միակրօն և միախոհ դաւանութիւն հաւատացելոց և պահպանութիւն սրբազան արարողութեանց։(1)

(1). Որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի. և զանձն իւր մատնեաց վասն նորա. զի զնա սրբեսցէ։ Եփե. Ե. 25 և 26.
(2). Տուր տանել առ եօթն եկեղեցիսն՝ որք են յԱսիա, Եփեսոս, և ՚ի Զմիւռնիա... Յայտ. Ա. 11.
(3). Շինեալք ՚ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. Եփես. Բ. 20.



Հ. Ո՞վ է կառավար եկեղեցւոյ.
Պ. Անեպէտ գլուխ և կառավար եկեղեցւոյ Քրիստոս է, որ խոստացաւ անանջատ մնալ ՚ի հաւատացելոց իւրոց մինչև ցկատարած աշխարհի. (2) սակայն կացոյց ՚ի կառավարութեան եկեղեցւոյ զսպասաւորս նորոյ ուխտի և զհազարապետս խորհրդոց նորա։(3)
Հ. Զի՞նչ է պաշտօն հովուաց եկեղեցւոյ։
Պ. Քարոզել զբան Տեառն հաւատացելոց.(4) մատակարարել զխորհուրդս, (5) և հերքել զհերձուածս։(6)

(1). Զի ոչ եթէ խռովութեան է Աստուած՝ այլ խաղաղութեան... և ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ և ըստ կարգի լինիցի. Կորն. Դ. 33 և 40.
(2). Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև ՚ի կատարած աշխարհի. Մատ. ԻԸ. 20.
(3). Զգոյշ կացէք անձանց՝ և ամենայն հօտին՝ յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն. Գործք. Ի. 28.
(4). Եւ դու քարոզեա զբանն հաս ՚ի վերայ ժամու և տարաժամու. Բ. Տիմ. Դ. 2.
(5). Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև պաշտօնեայս Քրիստոսի և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ, Ա. Կորն. Դ. 1.
(6). Պարտ է Եպիսկոպոսին... վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապետութեան... և զհակառակորդսն կշտամբել. Տիմ. 7 և 9.

Հ. Ո՞րոնք են հերձուածք

Պ. Կործիք կամ փորձաւորութիւն հակառակ բանին Աստուծոյ. հիմնեալ 'ի միտս և 'ի անձնիւր մեկնութեան սուրբ գրոց. (1)

Հ. Ո՞րք են վնասք լինին եկեղեցւոյ 'ի հերձուածոց.

Պ. Տարաձայնութիւն 'ի դաւանութեան և պառակտումն եկեղեցւոյ.

Հ. Ո՞ր ոք միայն է լուծանել զխնդիրս հերձուածոց.

Պ. Ընդհանրական ժողովք Հայրապետաց և Վարդապետաց եկեղեցւոյ, և ոչ միով ումամբ 'ի նոցանէ. (2)

Հ. Ո՞րպէս կոչին այսպիսի ընդհանրական ժողովք հաւաց եկեղեցւոյ.

Պ. Տիեզերական ժողովք.

Հ. Ո՞րոնք սկսանին այսպիսի տիեզերական ժողովք.

Պ. Յառաջելոց ասեմ՝ որք զօրաւորագոյնն էին Հրէից ընդ նորընծայ հեթանոսս քրիստոնէից յաղագս շփոթ երթալոյ աւանդութեանց հնոյ ուխտի, ժողովեցան Երուսաղէմ, միաբան խորհրդով լուծին. և սահմանեցին ազատ լի-

(1). 'Ի ձեզ լինիցին սուտ վարդապետք՝ ազդեալ որք մուծանեն հերձուածս կորստեան. բ. Պետ. բ. 1.
(2). Ամենայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծմամբ ոչ լինի. բ. Պետ. ա. 20.



նել քրիստոնէից յայնցանէ. (1)

Հ. Քանի՞ տիեզերական ժողովք եղեն ցայսօր ժամանակի

Պ. Հայք ընդունին զերիս միայն՝ զՆիկիոյ, զԿոստանդնուպոլսի. և զԵփեսոսի, իսկ Յոյնք ընդունին զեօթն.

Հ. Ո՞ւր և վասն է՞ր եղև առաջին ժողովն տիեզերական.

Պ. Յամի Տեառն 325. առ կայսերութեամբ Կոստանդիանոսի մեծի 'ի Նիկիոյ գումարութեամբ 318. Հայրապետաց սրբոց դատապարտեցաւ աղանդն Արիոսի՝ որ ուսուցանէր ոչ դաւանել զՅիսուս Քրիստոս՝ Աստուած. և յօրինեցաւ հանգանակն հաւատոյ.

Հ. Ո՞ւր և վասն է՞ր եղև երկրորդ ժողովն տիեզերական.

Պ. Յամի Տեառն 381. առ իշխանութեամբ Թէոդոսի մեծի 'ի Կոստանդնուպոլիս. ժողովմամբ 150. Հայրապետաց սրբոց դատապարտեցաւ աղանդն Մակեդոնի, որ ուրանայր զԱստուածութիւն Հոգւոյն սրբոյ. և սահմանեցաւ դաւանել զնա համապատիւ Հօր և Որդւոյ.

Հ. Ո՞ւր և վասն է՞ր եղև երրորդ ժողովն տիեզերական.

(1). Եւ ժողովեցան առաքեալքն և երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ. Գործ. ժե. 6.

Պ. Յամի Տեառն 431. առ կայսերութեամբ Թէոդոսի փոքու յԵփեսոս քաղաքի ժողովով 200. Հարց սրբոց դատապարտեցաւ աղանդն Նեստորի՝ որ ուսուցանէր դաւանել 'ի Քրիստոս զերկուս դէմս կամ զերկուս անձնաւորութիւնս 'ի միում բնութեան. և հաստատեցաւ խոստովանել 'ի մի անձն նորա զԱստուածային և զմարդկային բնութեանցն զմիաւորութիւն.

Հ. Ո՞րք և վասն է՞ր եղև չորրորդ ժողովն:

Պ. Յամի Տեառն 453. 'ի Քաղքեդոն առ կայսերութեամբն Մարկիանոսի. գումարութեամբ 600. Հարց՝ որք դատապարտեցին զաղանդն Եւտիքականաց զմի չփոթեալ բնութիւն 'ի Քրիստոս քարոզողաց:

Հ. Ո՞րք և վասն էր եղև հինգերորդ ժողովն.

Պ. Յամի Տեառն 553. 'ի Կոստանդնուպօլիս 'ի ժամանակս Յուստինիանոսի կայսեր ժողովմամբ 165. Հարց դատապարտեցան մոլորութիւնքն Որոգինեայ և հաստատեցան ամենայն կանոնք առաջնոց ժողովոց.

Հ. Ո՞րք և վասն էր եղև վեցերորդ ժողովն:

Պ. Յամի Տեառն 680. 'ի կայսերութե Կոստանդիանոսի Պագանոսի 'ի Կոստանդնուպօլիս ժողովով 170. Հարց դատապարտեցաւ



աղանդն միակամադաւանից՝ որք ուսուցանէին դաւանել 'ի Քրիստոս զմի կամս միայն ըստ Աստուածութեանն.

Հ. Ո՞րք և վասն էր եղև եօթներորդ ժողովն:

Պ. Յամի Տեառն 787. առ կայսերութեամբ Կոստանդիանոսի փոքու 'ի Նիկիա՝ գումարութեամբ 367. Հարց դատապարտեցաւ աղանդն պատկերամարտից և հաստատեցաւ յարգութիւն պատկերաց.

Հ. Հարկ իցէ սուրբ համարել զկանոնս եկեղեցւոյ:

Պ. Աներկմիտ. քանզի Փրկիչն իսկ զանարգուս կանոնաց եկեղեցւոյ 'ի դատապարտութիւն մատնէ հաւասար անհաւատից. (1)

Հ. Հնա՞ր իցէ գտանել զարքայութիւն Աստուծոյ արտաքոյ կամ առանց եկեղեցւոյ:

Պ. Ո՛չ. քանզի առանց ընդունելութեան առ 'ի Փրկչէն աւանդեալ խորհրդոց չէ՛ք յոյս փրկութեան. իսկ խորհուրդքն մատակարարին միայն 'ի ձեռն Հովուաց եկեղեցւոյ.

(1) Ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ որ եղիցի քեզ իբրև զհեթանոս և զմաքսաւոր: Մատ. ժը. 17.

## ԴԱՍՆ ԽԹ.

Յաղագս խորհրդոց։

Հ. Զի՞նչ են խորհուրդք։

Պ. Խորհուրդք կոչին այնպիսի արտաքին գործողութիւնք, յորս ՚ի ձեռն երևելի նշանաց ինչ պարգևի հաւատացելոցն աներևութական շնորհքն Աստուծոյ։

Հ. Վասն է՞ր յընդունելութիւն շնորհաց սահմանեաց Քրիստոս զխորհուրդս։

Պ. Վասն այնորիկ, զի ընդունելութեամբ խորհրդոց ցուցցուք զհաւատս մեր առ Աստուած. և երևելի նշանօք նոցա աներևոյթս լիցուք զընդունելութենէ շնորհաց։

Հ. Քանի՞ խորհուրդք են յեկեղեցւոջ։

Պ. Եօթն. մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն, ապաշխարութիւն, ձեռնադրութիւն, պսակ, և վերջին օծումն։

Հ. Միօրինակ յարգո՞յք են այս ամենայն խորհուրդք։

Պ. Յարգոյք են վասն այնորիկ՝ զի ամենեքեան ծառայեն յընդունելութիւն շնորհաց. բայց ոմանք յայսցանէ միայն օգտակարք են. այլք հարկաւորք, և ոմանք կարևորք յոյժ առ փրկութիւն.



Հ. Ո՞ր ՚ի խորհրդոց են կարևորք յոյժ ՚ի փրկութիւն։

Պ. Մկրտութիւն և հաղորդութիւն։

Հ. Զի՞նչ է մկրտութիւն։

Պ. Մկրտութիւնն է խորհուրդ, յորում ՚ի լուանալ մարմնոյն ջրով՝ լուացեալ լինի հոգի հաւատացելոյն [illegible] կամ արեամբն Քրիստոսի։

Հ. Յումմէ՞ եդաւ խորհուրդս այս։

Պ. ՚Ի Յիսուսէ Քրիստոսէ, որ պատուէր ետ Առաքելոցն. Գնալ և աշակերտել զամենայն հեթանոսս մկրտելով զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ (1)

Հ. Զի՞նչ պահանջի ՚ի մերձեցելոյն առ այս խորհուրդ։

Պ. Ընկալումն Աւետարանական հաւատոց. որպէս հրամայեաց Փրկիչն. Քարոզեցէք զԱւետարանն ամենայն արարածոց. որ հաւատայ և մկրտեսցի կեցցէ։ (2)

Հ. Վասն է՞ր մատակարարի մկրտութիւնն տղայոց։

Պ. Ըստ հաւատոց ծնողաց նոցա և կնքահարց՝ որք պարտաւորին հրահանգել զնոսա ՚ի գիտութիւն օրինաց քրիստոնէութեան. զայդպիսի

(1) Մատթ. ԻԸ. 19.

(2) Մարկ. ԺԶ. 15 և 16.

ոչ մերժէ փրկչին յեկեղեցւոյ իւրոյ ։ (1)

Հ. Զի՞արդ կատարի մկրտութիւնն.

Պ. Մկրտեալն ընկղմի երիցս ՚ի ջուր յանուն քահանային. մկրտի ծառայս Աստուծոյ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

Հ. Զի՞նչ նշանակէ մկրտելն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

Պ. Նշանակէ նուիրել զամենայն ժամանակս կենաց ՚ի ծառայութիւն միասնական սուրբ Երրորդութեան ։ (2)

Հ. Զի՞նչ գրի զմկրտութենէ ՚ի հանգանակի.

Պ. Տասներորդ անդամ. (Հաւատամք) ՚ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց ։

Հ. Զի՞նչ խոստովանիմք բառ այդմ անդամոյ հանգանակիդ.

Պ. Թէ միանգամ ընկալեալ և ոչ երբէք վասն զինչ և իցէ պատճառի կրկնեալ խորհուրդ մկրտութեան, ծառայէ հաւատացելոյն ՚ի քաւութիւն մեղաց ։

Հ. Վասն է՞ր մկրտութիւնն կարեւոր յոյժ համար փրկութիւն.

(1). Թո՛յլ տուք մանկտւոյդ՝ և մի արգելուք զդոսա գալ առ իս. զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից. Մատ. ԺԹ. 14

(2). Եթէ ոք կամի գալ զկնի իմ՝ ուրացցի զանձն իւր՝ Մարկ. Ը. 34.



Պ. Ըստ փրկչին բանի. Եթէ ոք ոչ ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ. (1) քանզի առ ՚ի քաւութիւն սկզբնական մեղաց, զոր մեղաք Ադամաւ, չիք այլ ինչ հնար բաց ՚ի մկրտութենէ ։

Հ. Որ խորհուրդ է դարձեալ կարեւոր յոյժ առ փրկութիւն:

Պ. Հաղորդութիւն ։

Հ. Զի՞նչ է հաղորդութիւն.

Պ. Հաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում հաւատացեալն ընդ տեսակաւ սրբազան հացի՝ նոյն իսկ մարմնոյն Քրիստոսի. և ընդ տեսակաւ գինւոյ՝ նոյն իսկ արեանն Քրիստոսի հաղորդի ՚ի թողութիւն մեղաց և ՚ի ժառանգութիւն յաւիտենից կենաց ։

Հ. Յումմէ՞ կարգեցաւ խորհուրդս այս.

Պ. ՚Ի Քրիստոսէ փրկչէ մերմէ ։

Հ. Ե՞րբ և զի՞արդ

Պ. Յերեկոյի մատնութեանն իւրոյ ՚ի ձեռս Հրէից ՚ի մահ, յետ ընթրեացն ընդ Աշակերտսն՝ զոր զիրն խորհրդական ընթրիք կոչէ, գոհացաւ Քրիստոս զՀօրէ Աստուծոյ. և զկնի աղօթիցն առեալ հաց, օրհնեալ, բեկեալ զայն

(1). Յովհ. Գ. 5.

՚ի մատուցանս և բաշխեալ ամենայն աշակերտացն իւրոց՝ ասաց. Առէք կերայք՝ այս է մարմին իմ. (1) և ապա առեալ բաժակ զգինւոյ ըն-բռնելով. Ետ նոցա և ասէ. Արբէք ՚ի դմանէ ամենեքին. զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի որ ՚ի վերայ բազմաց հեղու ՚ի թողութիւն մեղաց. (2)

Հ. Վասն է՞ր կարգեաց Քրիստոս զայդ խորհուրդ։

Պ. Նախ՝ զի ՚ի կատարել խորհրդոյս յիշեցուք միշտ զչարչարանսն՝ զոր չարչարեցաւ Քրիստոս վասն մեր. (3) Երկրորդ՝ զի հաւատով հաղորդեալ նմին. ընկալցուք զմիաւորութիւն, այսինքն միանալ ընդ Քրիստոսի. (4) և անվախճան կենաց լիցուք ժառանգորդք. (5)

Հ. Ո՞րք են պտուղք ընդունելոյն զպատուական ՚ի հաղորդութեան։

Պ. Ընդունելիս շահին՝ որք միաբանեալ առ այս խորհուրդ արժանապէս ընդունելութեամբ անձանց (6)

(1). Մատթ. իզ. 26.
(2). Մատթ. իզ. 27 և 28.
(3). Զայս արարէք առ իմոյ յիշատակի. Կորն. ժա. 24.
(4). Որ ուտէ զմարմին իմ, և և ըմպէ զարիւն իմ. ընդ իս բնակեսցէ և ես ՚ի նմա. Յովհ. զ. 57.
(5). Եթէ ոք ուտիցէ ՚ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ՚ի յաւիտեան. Յովհ. զ. 52.
(6). փորձեսցէ մարդ զանձն իւր. և ապա ՚ի հացէ անտի կերիցէ և ՚ի բաժակէն արբցէ. ա. Կորն. ժա. 28.



և ճշմարիտ հաւատով արժանապէս մատչին. իսկ որ անարժանութեամբ հաղորդին ոչ միայն թափուր մնայ ՚ի հոգեւորական օգտէ աստի, այլև դատապարտի յԱստուծոյ իբրև անարգու սրբութեան Տեառն։ (1)

Հ. Վասն է՞ր խորհուրդս այս կարևոր յոյժ համարի առ փրկութիւն.

Պ. Վասն այնորիկ՝ զի Փրկիչն զորս ոչ ընդունին զայս, մերժէ ՚ի ժառանգութենէ անվախճան կենաց. Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս. (2)

Հ. Որպիսի խորհուրդք դարձեալ պիտոյ են իւրաքանչիւր քրիստոնէի ՚ի փրկութիւն.

Պ. Դրոշմ և ապաշխարութիւն.

Հ. Զի՞նչ է դրոշմն.

Պ. Դրոշմն է խորհուրդ, յորում յօծանել արտաքուստ օրհնադրեալ անդամոց մարմնոյ միւռոնաւ, պարգևին հաւատացելոյն ներքին շնորհք Հոգւոյն սրբոյ.

(1). Որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն. Կորն. 27.
(2). Յովհ. զ. 54.

Հ. Յումմէ՞ սահմանեցաւ խորհուրդդ այդ։

Պ. Ի սրբոց Առաքելոց՝ որք կատարէին զայդ դնելով զձեռս իւրեանց ՚ի վր մկրտելոց. (1)

Հ. Զիա՞րդ կատարի։

Պ. Վաղվաղակի յետ մկրտութեան քահանայն օծեալ միւռոնաւ զգլխաւոր անդամս մկրտելոյն, ասէ. Կնիք պարգեւաց Հոգւոյն սբյ։(2)

Հ. Ընդէ՞ր հարկաւոր համարի դրոշմն իւրաքանչիւր քրիստոնէի։

Պ. Վասն այսորիկ՝ զի ամենայն ոք կարօտի օգնականութեան և գործակցութեան պարգեւաց սրբոյ Հոգւոյն՝ ՚ի պահպանութիւն օրինաց քրիստոնէութեան, զոր յանձն առնու ՚ի մկրտութեան։

Հ. Զի՞նչ այլ խորհուրդ գոյ հարկաւոր իւրաքանչիւր քրիստոնէի ՚ի փրկութիւն։

Պ. Ապաշխարութիւն։

Հ. Զի՞նչ է ապաշխարութիւն։

Պ. Ապաշխարութիւնն է խորհուրդ՝ յորում

(1). Յայնժամ եդին զձեռս ՚ի վերայ նոցա՝ և առնուին զՀոգի սուրբ։ Գործ. Ը. 17.
(2). Որ եօծ զմեզ՝ Աստուած է. որ և կնքեաց զմեզ. և ետ զառհաւատչեայ Հոգւոյն ՚ի սիրտս մեր։ Բ Կորնթ. Ա. 21 և 22.



հաւատացեալն ճշմարտի ապաշաւեալ զմեղս իւր և հայցեալ զթողութիւն նոցա ՚ի շնորհս արդեանցն Քրիստոսի՝ ընդունի զքաւութիւն մեղաց յԱստուծոյ ՚ի ձեռն խոստովանահօրն։

Հ. Յումմէ՞ եդաւ խորհուրդս այս։

Պ. Ի Յիսուսէ Քրիստոսէ Փրկչէ մերմէ՝ Որ սկսաւ քարոզել և ասել՝ ապաշխարեցէք. (1) զկնի իւրեան զիշխանութիւն թողութեան մեղաց աւանդեաց Առաքելոց իւր և ՚ի յաջորդս նոցա ՚ի հովիւս եկեղեցւոյ ասելով. Առէք հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի. (2)

Հ. Զիա՞րդ կատարի այդ խորհուրդ.

Պ. Ապաշխարողն հաստատուն առաջադրութ ուխտէ այսուհետև անարատութեամբ քաղաքավարել. խոստովանի զմեղս իւր Աստուծոյ առաջի քահանայի. և նա ըստ իշխանութեան Առաքելութեանն և ըստ պարգեւաց Հոգւոյն սրբոյ կապէ զնա կամ արձակէ. (3)

(1). Մատ. Դ. 17.
(2). Յովհ. Ի. 22. և 23.
(3). Զոր միանգամ կապեսցես յերկրի. եղիցի՝ կապեալ

Հ. Ընդէր այս խորհուրդ հարկաւոր համարի եկեղեցւոյ ժողովրդեան քրիստոնէից։

Պ. Վասնզի ոչ ոք կարէ զինքն զերծ 'ի մեղաց համարիլ կատարելապէս. (1) և ամ ոք մեղուցեալ՝ զրկի յԱստուածային շնորհաց, վասն որոյ 'ի հաշտութիւն ընդ Աստուծոյ և 'ի վերստին ընդունելութիւն շնորհաց շնորհելոց 'ի մկրտութեանն, չիք այլ հնար բնաւ, բայց ապաշխարութենէ։ (2)

Հ. Ո՞ր յեօթն խորհրդոց եկեղեցւոյ ոչ զամենայն ոք պարտաւորեն։

Պ. Երեքին որք. ձեռնադրութիւն, պսակ, և վերջին օծումն։

Հ. Զի՞նչ է ձեռնադրութիւնն։

Պ. Ձեռնադրութիւնն է խորհուրդ՝ յորում հաւատացեալն ընտրեալ յեկեղեցւոյ՝ ձեռնադրութեամբ Եպիսկոպոսին նուիրի Հոգւով սրբով կատարել զխորհուրդս և հա-

յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի՝ արձակեալ յերկինս. Մատ. ժզ. 19.

(1) Եթէ ասիցեմք. եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք՝ զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն 'ի մեզ ոչ գոյ։ Ա. Յովհ. ա. 8.

(2) Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր՝ հաւատարիմ է նա՝ և արդար առ 'ի թողուլ մեզ զմեղս մեր. Ա. Յովհ. ա. 9.



մել զհօտ Քրիստոսի։ (1)

Հ. Յումմէ՞ հաստատեցաւ խորհուրդս այս։

Պ. Կարգադիր խորհրդոյս է Յիսուս Քրիստոս՝ որ ընտրեաց զաշակերտս իւր 'ի սրբազան կոչումն առաքելութեան. (2) Նոքա կացուցեալ յեկեղեցիս զյաջորդս իւրեանց յեպիսկոպոսութիւն. (3) հաստատեցին մշտաբար զխորհուրդ քահանայութեան։ (4)

Հ. Ո՞րպէս կատարի ձեռնադրութիւնն։

Պ. Ընծայեալն 'ի քահանայութիւն յանդիմանի եկեղեցւոյն՝ որ հաստատէ զընտրութիւն գոչելով՝ արժանի է. և Եպիսկոպոսն ձեռնադրեալ զնա, խնդրէ յԱստուծոյ հայնակցութեամբ եկեղեցւոյն պարգևել նմա զզօրութիւն,

(1) Եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն. Գործ. ի. 23.

(2) Գնացէք այսուհետև աշկերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ. Մատ. իը. 19. 20.

(3) Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ երիցունս աղօթս արարեալ հանդերձ պահօք՝ յանձն արարին զնոսա Տեառն. Գործ. ժդ. 22.

(4) Այսուհետև՝ որ զձեզ անարգէ՝ ոչ զմարդ անարգէ, այլ զԱստուած՝ որ և ետ զհոգին իւր սուրբ 'ի ձեզ. Ա. Թես. դ. 8.

զկարողութիւն և զՀանճար անստերիւր ըն֊
թանալոյ զճանապարհ կոչման իւրոյ։

Հ. Զի՞նչ օգուտ ընծայէ այս խորհուրդ ընդունողին.

Հ. Որ արժանապէս ընթանայ զասպարէզ քահանայութեան՝ մեծի պատուոյ և փառաց ՚ի հանդերձելումն լինի ժառանգորդ։ (1)

Հ. Պսակն զի՞նչ է.

Պ. Է խորհուրդ եկեղեցւոյ՝ յորում այրն և կինն աղօթիւք քահանայի և եկեղեցւոյն ընդունին փոխադարձ համաձայնութեամբ իւրեանց զօրհնութիւն յԱստուծոյ։

Հ. Ո՞վ է սահմանադիր խորհրդոյս։

Պ. Ինքն Աստուած՝ որ օրհնեաց զնախատեղծսն՝ զայրն և զկինն, զնախահարս մեր։ (2)

Հ. Որպէս կատարի.

Պ. Ի գալ առն և կնոջն յեկեղեցի և ՚ի յայտնել նոցա ՚ի լսել ժողովրդեան զփոխա֊

(1). Զի որք բարւոք պաշտիցեն, զաստիճան բարի անձանց իւրեանց շահին, և զբազում համարձակութիւն ՚ի հաւատսն, որ ՚ի Քրիստոս Յիսուս. ա. Տիմ. գ. 13։

(2) Արու և էգ արար զնոսա և օրհնեաց զնոսա Աստուած՝ և ասէ աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր։ Ծնն. ա. 27. 28.



դարձ հաւանութիւն իւրեանց միմեանց, քահանայն աղօթիւք եկեղեցւոյն հայցէ ՚ի վերայ նոցա զօրհնութիւն Աստուածային և հաստատէ զշաղկապ ամուսնութեան նոցա։

Հ. Վասն է՞ր խորհրդոյդ այդ օգտակար համարի ՚ի փրկութիւն.

Պ. Վասն այնորիկ՝ զի համաձայն դիտաւորութեան Ս. Գ. նպաստէ աճելութեան ազգի մարդկան և խափանելոյ յԱստուած ընդդէմ մոլութեանց։

Հ. Զի՞նչ է վերջին օծումն.

Պ. Է խորհուրդ՝ յորում հաւատացեալն՝ անկեալ ՚ի հիւանդութիւն ինչ, օծումբ ՚ի քահանայէն իւղով՝ ընդունի զբժշկութիւն և զմեղաց թողութիւն։

Հ. Ո՞վ է կանոնադիր խորհրդոյս։

Պ. Հոգին սուրբ ՚ի ձեռն Առաքելոյն Յակոբայ, որ գրէ. Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն. և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն, և աղօթքն հաւատովք փրկեսցէ զաշխատեալն, և յարուսցէ զնա Տէր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցին նմա։ (1)

(1). Յակ. ե. 14 և 15.

Հ. Առ ժամանակ մի՞ ունելոց են եկեղեցւոյ այս ամենայն խորհուրդք, թէ մշտնջենաւոր։

Պ. Մշտնջենաբար. քանզի պատուիրէ Փրկիչն Առաքելոյն բանիւ. Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս, և զբաժակս ըմպիցէք՝ զմահ Տեառն պատմեսջի՛ք. մինչև եկեսցէ նա. (1) ուրեմն հարկ ՚ի վերայ կայ եկեղեցւոյն կատարել զայնոսիկ մինչև ցմիւսանգամ գալուստն Քրիստոսի։

## ԳԼՈՒԽ. Ժ.

Յաղագս երկրորդ գալստեան Քրիստոսի։

Հ. Ո՞ր ինչ գրի ի հանգանակի զերկրորդ գալստենէն Քրիստոսի։

Պ. Խոստովանի անգամ. Գալոց է նովին մարմնով և փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հ. Ո՞ր ինչ դաւանիմք ըստ այդմ անդամոյ հանգանակիդ։

Պ. Թէ Յիսուս Քրիստոս ըստ խոստմանն իւրոյ գալոց է միւսանգամ յաշխարհս ոչ ևս

(1). ա. կորն. ժա. 2;



՚ի կերպարանս նուաստութեան, այլ փառօք Աստուածութեանն իւրև դատաւոր և Թագաւոր աշխարհի հատուցանել իւրաքանչիւր ումեք ըստ գործոց։(1)

Հ. Ե՞րբ եղիցի երկրորդ գալուստն Քրիստոսի։

Պ. Զայսմանէ չէք յայտնեալ ինչ Աստուածաշունչ գիրս.(2) զայս ինչ և եթ գիտեմք թէ՝ լինելոց է այն ՚ի կատարած աշխարհի։(3)

Հ. Վասն է՞ր ծածկեալ է ՚ի մեզ ժամանակ երկրորդ գալստեանն Քրիստոսի։

Պ. Վասն այնորիկ՝ զի զամենայն ժամանակս կենաց մերոց ջանասցուք անարատ գտանիլ և պատրաստ կալ առաջի ատենին Տ՟ն։(4)

(1). Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա. յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք և մեկնեսցէ զնոսա ՚ի միմեանց որպէս հովիւ զի մեկնեսցէ զոչխարս յայծեաց Մատ. իե. 31 և 32։
(2). Բայց վասն աւուրն այնորիկ և ժամուն՝ ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք երկնից, և ոչ որդի՝ բայց միայն Հայր, Մատ. իդ. 36։
(3). Եւ յետ աւուրն յայնոսիկ... արեգակն խաւարեսցի, և լուսին՝ ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք յերկնից թօթափեսցին՝ և զօրութիւնք յերկնից շարժեսցին, և յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք, և զօրութեամբ և փառօք բազմօք, Մարկ. ժգ. 24, 25 և 25։
(4). Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու Տէ՛ր

Հ. Զի՞նչ է կատարած աշխարհի։

Պ. Կատարած աշխարհի է վախճան գոյութ կենցաղոյս՝ և վերջին սահման ժամանակաց։(1)

Հ. Հաստատէ՞ սուրբ գիրն զկատարած աշխարհի։

Պ. Այո՛, քանզի Յս Քրիստոս ինքնին ճշմարտէ զայն, ասելով. Երկինք և երկիր անցցեն։(2)

Հ. Զիա՞րդ եղիցի կատարած աշխարհի։

Պ. Զայս մասամբ իւիք ստորագրէ Առաքեալն Պետրոս օրինակ զայս. Այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են. հրոյ պահեալք յօրն դատաստանի. . . այլ եկեսցէ օր Տեառն իբրև զգող, յորում երկինք տագնապաւ անցցեն, և բնութիւնք հրով կիզեալ լուծցին, և երկիր՝ և որ միանգամ ՚ի նմա գործք գտանիցին։(3)

Հ. Յայտնէ՞ գիրն զժամանակ կատարածի աշխարհիս

Պ. Ոչ. զի ծածկեաց զայն Քրիստոս յաշակերտաց իւրոց և յԱռաքելոց, ասելով.

ձեր գայ։ Վասն այսորիկ և դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակնունիցիք, գայ Որդի մարդոյ։
Մատ. իդ. 42. և 45։

(1). Զի ոչ եւս կայ այլ ժամանակ։ Յայտ. ժ. 6։

(2). Մատ. իդ. .

(3). Բ. Պետ. գ. 7. և 10։



Ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան։(1)

Հ. Ընդէ՞ր յամեցուցանէ Քրիստոս ցարդ զերկրորդ գալուստն իւր,

Պ. Վասն այնորիկ միայն՝ զի քաղցր երկայնմտութեամբ իւրով սպասէ մաքրութեանս մերում ՚ի մեղաց և ապաշխարութեան։(2) քանզի ՚ի գալստեան իւրում ոչ ևս ողորմեսցի նա յահեղ ատենի անդ մեղաւորաց այլ դատաստան արդար դատեսցի։(3)

Հ. Զի՞նչ է ահեղ դատաստանն Աստուծոյ։

Պ. Ահեղ, վերջին և ընդհանրական դատաստանն է՝ յորում ՚ի հանդերձեալ գալստեանն Քրիստոսի յայտնեսցին գործք, բանք, յօժարութիւնք և գաղտնիք սրտից մարդկան և ընկալցին զարժանաւոր հատուցումն(4)

(1). Գործ. ա. 7.

(2). Ոչ յամեցուսցէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամրեն համարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի եթէ ոք կորիցէ. այլ ամենեցուն հասանել յապաշխարութիւն. Բ. Պետ. գ. 9։

(2). Ինքն դատի զաշխարհս արդարութեամբ, և ժողովուրդս իւր ուղղութեամբ. Սաղմ. թ. 9.

(3). Ասեմ ձեզ. թէ ընդ ամենայն դատարկ բանի, զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի. Մատ. ժբ. 36.

Հ. Մի՞ միայն Քրիստոս եղիցի դատաւոր աշխարհի։
Պ. Սուրբ Երրորդութիւն դատեսցէ զաշխարհս.(1) բայց ՚ի դէմս Աստուածամարդոյն Քրիստոսի.(2)
Հ. Զիա՞րդ դատեսցէ Քրիստոս զկենդանիս և զմեռեալս.
Պ. Նախ յարուսցէ զմեռեալս և ապա ընդ կենդանեացն կոչեսցէ ՚ի դատաստան.

## ԳԼՈՒԽ. ԺԱ.

### Յաղագս յարութեան մեռելոց.

Հ. Զի՞նչ նշանակէ յարութիւն մեռելոց։
Պ. Զայն՝ թէ ՚ի հող լուծեալ մարմինք մեր կենդանացեալ, վերստին միաւորեսցին ընդ հոգւոց մերոց.(3).
Հ. Հաստատէ՞ յայտնութիւնն զյարութիւն մեռելոց։
Պ. Բացայայտ և հաւաստի հանիւք հաստատի ՚ի սբ գիրս յարութի մեռելոց.(4) և է գերագոյն

(1). Տէր Հայր մեր, Տէր Դատաւոր մեր, Տէր Իշխան մեր. Եսայ. ԼԳ. 22.
(2). Յաւուրն յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան... ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. Հռովմ. Բ. 16.
(3). Եւ բազումք ՚ի ննջեցելոց ՚ի հող երկրի յարիցեն, ոմանք ՚ի կեանսն յաւիտենականս. և ոմանք ՚ի նախատինս և յամօթ յաւիտենական. Դան. ԺԲ. 2.
(4). [illegible] Նոյնպէս և Քրիստ[illegible] 23.



անգամ հաւատոյս մերոյ: 1)
Հ. Զի՞նչ գրէ ՚ի հանգանակին վասն այսմանէ։
Պ. Մետասաներորդ անգամ.(Հաւատամք) ՚ի յարութիւն մեռելոց.
Հ. Զի՞նչ դաւանիմք բառ այդմ անդամոյ հանգանակին
Պ. Եթէ աներկմիտ յուսամք յետ մահուան յերկրորդ գալստեանն Քրիստոսի՝ յառնել ընդ մարմնոց մերոց։
Հ. Վասն է՞ր հաւատամք կարելի լինել յարութեան մեռելոց։
Պ. Նախ՝ զի Քրիստոս յարութեամբ իւրով հաստատեաց զայս ընդհանրական յարութի մերոյ.(2) երկրորդ՝ եթէ կարաց Աստուած յանէից ստեղծանել զամենայն արարածս, նա առաւել կարասցէ զքայքայեալ և զապականեալ մարմինս մեր վերստին նորոգել.(3)

1 Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն, ընդունայն են հաւատքն ձեր. Ա Կորն. ԺԵ. 16. 17.
(2). Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ. նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ՚ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա. Ա Թես. Դ. 13.
(3). Այլ ասիցէ ոք. զիարդ յառնեն մեռեալք. կամ որով մարմնով գայցեն. անմիտ, դու զոր սերմանես ոչ կենդանանայ եթէ ոչ մեռանիցի. և Աստուած տայ նմա մարմին որպէս և կամի. Ա Կոր. ԺԵ. 35. 36. և 38.

Հ. Ստա՞ն էր յարիցուք ընդ մարմնոց։

Գ. Որովհետև յաստի կեանս ներգործեմք հոգւով և մարմնով միանգամայն. վասնորոյ արդարութիւնն Աստուծոյ սահմանէ մեզ զե֊րանութիւն կամ զտանջանս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ (1)

Հ. Օ՞րպէս եղիցին մարմինք մեր յետ յարութեանն։

Գ. Անապականք և անմահք։ (2)

Հ. Ամենեքեան յարիցեն և արդարք և անօրէնք։

Գ. Ամենեքին առ հասարակ ըստ բանի Փրկ֊չին Եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ՚ի գերեզմանս կայցեն. լուիցեն ձայնի նորա և ելեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ ՚ի յարութիւն կենաց. և որոց զչար արարեալ իցէ ՚ի յարութիւն դատաստանաց։ (3)

Օ՞րինչ եղիցի որոց կենդանի մնացեալ իցեն ՚ի ժամանակի գալստեանն Քրիստոսի։

Գ. Նոքա ոչ մեռցին՝ այլ յանկարծ ի մի փո֊

(1 Զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի և եթէ չար։ Բ. Կոր. Ե. 10

(2). Զի պարտ է ապականացուիս այսմիկ զգենուլ զանապականութիւն, և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն. Ա. Կոր. ԺԵ. 53.

(3). Յովհ. Ե. 28 և 29։



փոխեսցին ՚ի նմանութիւն յարուցելոց. ըստ այնմ մեռեալք ՚ի Քրիստոս յարիցեն յառա֊ջագոյն. (1) ապա և մեք, որ կենդանիքս մնա֊ցեալ իցեմք, (2) ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան. նորոգեսցուք յանկար֊ծակի յական թօթափել։ (3)

Հ. Ո՞ւ ինչ յարիցեն մեռեալք։

Գ. Ի կեանս յաւիտենից։

## ԳԼ. ԱՒՍ. ԺԲ

Յաղագս հանդերձեալ կենաց։

Հ. Օ՞րինչ գրի ՚ի հանգանակի զհանդերձեալ կենաց։

Գ. Երկոտասաներորդ անդամ. (Հաւատամք) ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մար֊մնոց. յարքայութիւնն երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս։

Հ. Օ՞րինչ դաւանիմք ըստ այդմ անդամոյ հանգանակիդ։

Գ. Թէ ըստ հաւաստի վկայութեան սուրբ գրոց աներկմիտ ակնունիմք այլ կենաց յետ մահ֊

(1). Ա. Թես. Դ. 15.

(2). Անդ. 16.

(3). Ա. Կոր. ԺԵ. 51 և 52.

ուանի, որ և զկնի ընդ հանրական յարութեան լինելոցէ յաւիտենական ։ (1)

Հ. Միօրինա՞կ իցէ վիճակ ամենեցուն 'ի հանդերձելումն.

Պ. Ո՛չ. զանզի արդարք ըստ Տեառն յահաւոր ատենին վճռոյ փայլեսցեն 'ի նմին զերանութեան, իսկ մեղաւորք դատապարտեսցին 'ի տանջանս.

Հ. Նմենեքի՞ն առ հասարակ ունիցի՞ն զկեանս յաւիտենից.

Պ. Թէպէտ արդարք և մեղաւորք առ հասարակ ունիցին զկեանս յաւիտենականս, այլ որովհետև յաւիտենական կեանք մեղաւորաց 'ի պատճառս տանջանացն դառնագոյն ևս է քան զամ մահ, վասն որոյ և ասի յԱստուածաշունչ տառսն արդարոց միայն ունել ըզկեանս յաւիտենականս. իսկ մեղաւորաց զմահ յաւիտենական ։ (2)

Հ. Զի՞նչ իցէ մահն յաւիտենական.

Պ. Է՛ այն ահեղ և թշուառ վիճակ դատապարտելոյ՝ յորում նոքա զրկեալ յաւիտեան

(1). Կեանս յաւիտենականս ետ մեզ Աստուած. և այս է կեանքն, որ յՈրդին նորա են. Ա. Յովհ. Ե. 11.

(2). Անուն կենդանւոյ ունիս՝ և մեռեալ ես. Յայտ. Գ. 2.



'ի տեսութենէ Աստուծոյ, (1) և 'ի հաղորդութենէ երանելեաց, (2) յաւիտեան տանջեսցին 'ի դժոխս անշէջ հրով և անվախճան պատժովք ։ (3)

Հ. Միօրինա՞կ տանջեսցին ամենայն մեղաւորք.

Պ. Ոչ. այլ ըստ չափու մեղաց, ըստ այնմ. Ծառայն՝ որ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ՝ և ոչ պատրաստեսցի ըստ կամաց նորա, արբցէ գան բազում և որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ ։ (4)

Հ. Զի՞նչ է կեանքն յաւիտենական.

Պ. Է՛ այն երջանիկ վիճակ ընտրելոց՝ յոր յաւիտեան փայլեսցեն նոքա յետ յարութեանն յԱստուած և ընդ Աստուծոյ.

Հ. Զիա՞րդ եղիցի երանութիւնն արդարոց.

Պ. Սուրբ գիրք ոչ ստորագրեն զայն մի առ

(1). Որք ոչ տայցեն վրէժս 'ի սատակումն յաւիտենից յերեսաց Տեառն. Բ. Թես. Ա. 9.

(2). Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին աստի՝ առ ձեզ անցանել, ոչ կարեն և ոչ այտի ոք՝ առ մեզ անցանել. Ղուկ. ԺԶ. 26.

(3). Երթայք յինէն՝ անիծեալք 'ի հուրն յաւիտենական՝ որ պատրաստեալ՝ է սատանայի և հրեշտակաց նորա, և երթիցեն նոքա 'ի տանջանսն յաւիտենականս. Մատ. ԻԵ. 41և

(4). Ղուկ. ԺԲ. 47 և 48.

Պ. զի անճառ է այն մարդկային լեզուաւ և անհաս մտաց. (1) բայց ծանուցանէ լինել այնմիկ ոչ հեշտութիւն զգայական, այլ երանաւէտ վիճակ անընդհատ և հոգևոր ուրախութեան: (2)

Հ. Ո՞ր ինչ իցէ հոգևոր ուրախութիւն արդարոց.

Պ. Տեսանողութիւն ամենապայծառ լուսոյն Աստուածգիտութեան. (3) դէմ յանդիման տեսութիւն Աստուծոյ (4) և անպատում սիրելութիւն Աստուծոյ: (5)

Հ. Որպիսի հոգևոր ուրախութիւն ուրախասցին նոքա և եւս.

Պ. Ի կամս նոցա եղիցի յայնժամ կատարեալ սրբութիւն. իսկ 'ի հոգիսն խաղաղութիւն Աստուածային և անխռով անդորրութիւն: (6)

(1). Զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց. ա. կորն. բ. 9.

(2). Եւ զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ. Յովհ. ժզ. 22.

(3). Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած. Յովհ. ժէ. 3.

(4). ա. կորն. ժգ. 12.

(5). Ընդ. ժգ. 3.

(6). Կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի'



Հ. Յի՞նչ կայասցի երանութիւն մարմնոց մերոց.

Պ. Յայն՝ զի մարմինք արդարոց փառաւորեսցին և հոգիասցին. (1) և անապական և աննման գոլով՝ ազատք եղիցին 'ի հիւանդութեանց և անկարօտք ուտելեաց և ըմպելեաց: (2)

Հ. Ո՞րով պարտ իցէ ժամանել յայս երանութիւն անվախճան.

Պ. Առ 'ի լինել արժանի այսմ գերակատար երանութեան՝ հարկ է մեզ անխնայ արկանել զանձինս մեր 'ի հանդէս բարեպաշտութեան և հաւատոց. արիաբար ատել զամենայն ընդաբոյս չարաչար հակամիտութիւնս կամաց մերոց և խնդրել զայն ամենայն զօրութեամբ հոգւոյ և մարմնոյ որպէս ցանկայ Առաքեալն. Ինքն Աստուած խաղաղութեան սուրբ արասցէ զձեզ համօրէն, և բովանդակ ձեր ոգի և շունչ և մարմին անարատ 'ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի: (3)

զի մի ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայսպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ. Եփես. ե. 27.

(1). Սերմանի մարմին շնչաւոր՝ և յառնէ մարմին հոգևոր. ա. կորն. ժե. 44:

(2). 'Ի յարութեանն ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին, այլ են իբրև հրեշտակք յերկինս. Մատ. իբ. 30.

(3). ա. Թես. ե. 22 և 23:

ՎԱԽՃԱՆ

# ՅԱՆԿ

## ՄԱՍՆ Ա.

Յաղագս բնական Աստուած գիտութեան.


Գլուխք. Երես.

Ա. Յաղագս գոյութեանն Աստուծոյ 9.
Բ. Յաղագս յատկութեանց Աստուծոյ 12.
Գ. Յաղագս Արարչագործութեանն Աստուծոյ 17.
Դ. Յաղագս Նախախնամութեանն Աստուծոյ 20.
Ե. Յաղագս Աստուածպաշտութեան 23.
Զ. Յաղագս յայտնութեանն Աստուծոյ 27.


## ՄԱՍՆ Բ.

Յաղագս յայտնական Աստուածգիտութեան.


Գլուխք. Երես.

Ա. Յաղագս գոյութեան և յատկութեանց Աստուծոյ 31.
Բ. Յաղագս ամենասուրբ Երրորդութեան 36.
Գ. Յաղագս արարչութեան Աստուծոյ 42.
Դ. Յաղագս խնամարկութեանն Աստուծոյ 49.
Ե. Յաղագս մարմնաւորութեան Աստուածորդւոյն 52.
Զ. Յաղագս շնորհաց Աստուծոյ 66.
Է. Յաղագս օրինաց Աստուծոյ 73.
Ը. Յաղագս եկեղեցւոյ Աստուծոյ 99.
Թ. Յաղագս խորհրդոց եկեղեցւոյ 108.
Ժ. Յաղագս երկրորդ գալստեանն Քրիստոսի 120.
ԺԱ. Յաղագս յարութեան մեռելոց 124.
ԺԲ. Յաղագս հանդերձեալ կենաց 127.